ԵՐԿԻՐ

ՀՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄՆԻ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՄԱՐՏ 29-ԱՊՐԻԼ 4
2002 #10 /1661/

Երևան 10, Հանրապետության 30 հեռ. 52 15 01 e-mail: erkir@arminco.com

Հորինված «սցենարների» հետևորդները

Վերջին օրերին հայրենի քաղաքական գործիչների մի մասի եւ մի շարք լրատվամիջոցների միջավայրում մեծ մասսայականություն է վայելում աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային որոշ գործընթացների, իսկ ավելի կոնկրետ՝ հարեւան Վրաստանում ամերիկյան զինուժի տեղակայման շուրջ խոսակցությունը: Արդեն այս պահին տարաբնույթ, հաճախ իրարամերժ գնահատականների ու մեկնաբանությունների ահռելի տեսականի է առկա: Եվ, դատելով ամեն ինչից, քննարկումները ծավալվելու ու նորանոր երանգներով հարստանալու միտումներ են դրսեւորում:

Անշուշտ, որեւէ տարօրինակ բան չկա, որ մեր քաղաքական գործիչները, վերլուծաբաններն ու լրատվամիջոցներն ուշադրությամբ են հետեւում տեղի ունեցող զարգացումներին: Ընդհակառակը, շատ տարօրինակ կլիներ, եթե նման ուշադրություն չդրսեւորվեր: Սակայն հարցն այն է, թե այդ ուշադրությունը եւ դրանից բխող վերլուծությունները, գնահատականներն ու կանխատեսումներն ի՞նչ նպատակով են արվում. իրավիճակը ճիշտ հասկանալու եւ մեր երկրի համար արդյունավետ քաղաքականություն մշակելո՞ւ, թե՞ աշխարհաքաղաքական զարգացումների մտացածին «սցենարների» տրամաբանությունն ու տրամադրությունները ներքաղաքական կյանք տեղափոխելու համար:

Նման հարցադրման պարագայում արդեն էական նշանակություն չունի նաեւ այն հանգամանքը, որ հիշյալ «վերլուծությունների» գերակշիռ մասը չի ենթարկվում տարրական տրամաբանության, հաճախ էլ առկա է տարրական անտեղյակություն, եթե չասենք անգրագիտություն:

Աշխարհաքաղաքական թեմայով այս տվայտանքներին անդրադառնում ենք այն պատճառով, որ առկա է ոչ միայն թերի, այլ նաեւ պատվիրված վերլուծություն: Այն է փորձել համոզել հանրությանը, թե տարածաշրջանում ընդհանրապես եւ Հայաստանում հատկապես պատրաստվում է խաղարկվել ամերիկյան մի «սցենար», որի նպատակն է փոխել հանրապետության քաղաքական իշխանությունը եւ իշխանության բերել պրո-ամերիկյան դիրքորոշում ունեցող, արմատական լիբերալիզմ դավանող քաղաքական ուժի: Իսկ այդպիսի քաղաքական ուժը մեզանում... ՀՀՇ-ն է:

Հասկանալի է, չէ՞, որ այս «սցենարը» մշակվել է ոչ թե ամերիկյան քաղաքականության միջանցքներում, այլ շատ ավելի մոտ վայրում հայրենի քաղաքական դաշտի հիշական եւ հիշամետ միջավայրում: Հետեւելով տարածաշրջանային գործընթացներին այս միջավայրը «գտել է» ռեւանշիստական իր մղումներին աշխարհաքաղաքական երանգ տալու, քաղաքական կյանքում ակտիվանալու, առաջիկա ընտրություններին մասնակցելու որոշակի «հիմնավորում»:

Ում կհասնի 8,5 մլն դոլարը

Մեր էներգետիկ համակարգի աքիլլեսյան գարշապարը անախադեպ չափերի հասնող կորուստներն են, դրանց մեջ հատկապես գերկորուստները: Ճիշտ է, վերջին շրջանում էլեկտրաէներգիայի գողությունը որոշ չափով նվազել է, սակայն, փորձագետների գնահատումներով, ներկա դրությամբ էլ պատկառելի գումարներ են, այսպես ասած, «լեւի» մտնում «լույսի մարդու» գրպանը: ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի գնահատումներով, տարեկան արտադրված 180 միլիոն դոլար արժողության էլեկտրաէներգիայի վաճառքից հավաքվում է, լավագույն դեպքում, 120 միլիոն դոլար կամ ընդհանուրի միայն 66 տոկոսը, մնացյալը չվճարումներն են եւ գերկորուստները, կամ պարզ ասած գողությունը:

Այս ու այնտեղ հաճախ կարելի է լսել «լույսի մարդու» հետ բնակիչների գաղտնի գործարքների մասին, երբ կանխիկ վճարվում է միայն փաստացի սպառած էլեկտրաէներգիայի ընդամենը մի մասի դիմաց: Իսկ մնացած մասը կորուստների վրա բարդելը տեսուչն ամբողջությամբ վերցնում է իր վրա: Էլեկտրաէներգիա գողանալը հիմա հեշտ է, քանի որ հատկապես բաշխիչ ցանցերում կորուստները վերահսկելը տեխնիկապես բարդ է. ցածր ճշգրտության, այսպես կոչված, ինդուկցիոն հաշվիչները վաղուց իրենց դարն ապրել են, մյուս կողմից դրանց միջոցով զանազան մեքենայություններ անելու հարցում տեսուչների «վարպետությունը», կարելի է ասել, գագաթնակետին է հասել: Էլեկտրաէներգիայի մանրածախ վաճառքի հաշվառման համակարգի արդիականացումն օրախնդիր է. սոսկ բաշխիչ ցանցերի աշխատակազմի կրճատումը չի կարող լուծել խնդիրը: Էներգետիկայի նախարարը հասցրել է իր պաշտոնավարման ընթացքում բաշխիչ ցանցերից 3500 մարդ հեռացնել: Որոշ տվյալներով, մի այդքան էլ կհեռացվի: Դա թեեւ անհրաժեշտ, սակայն միանգամայն ոչ բավարար նախապայման է սուբյեկտիվ գործոնով պայմանավորված կորուստները նվազագույնի հասցնելու համար: Հարկավոր է արմատապես նորացնել հաշվառման սարքերը դրանով իսկ բացառելով մարդկային ձեռքի միջամտությունը, եւ մեծ ծախսեր են պետք: Իսկ դրա համար անհրաժեշտ գումարները կարծես թե կան:



«Երկիր»-ը Լիբանանում

Այս համարից սկսած, «Երկիր» շաբաթաթերթը, Բեյրութում հրատարակվող «Ազդակ» օրաթերթի աջակցությամբ, ամեն շաբաթ օր լույս է տեսնելու Լիբանանում:

Քաղաքական 2

Թշնամանքի թշվառությունը

«Պարզ զրույցի փորձ» խորագրով Աղվան Վարդանյանը անդրադառնում է ՀՅԴ մասին ծեւավորված այն թյուր կարծիքին, թե Դաշնակցությունը ատելությամբ է լցված հարեւան ժողովուրդների նկատմամբ:

Քաղաքական 4

Ընտրությունների արդյունքները չեն վիճարկվում

«Հանրապետություն» կուսակցությունը չի վիճարկում 1998 թվականի նախագահական ընտրությունների արդյունքները,- մեր թղթակցի հետ զրույցում հայտարարեց կուսակցության քաղաքական խորհրդի նախագահ Ալբերտ Բազեյանը ավելացնելով. «Ես չգիտեմ, 100 հազար քվեաթերթիկ կեղծվել է, թե՝ ոչ, ընտրական հանձնաժողովի անդամ չեմ եղել: Ես ընդամենը Ռ. Քոչարյանի վստահված անձանցից մեկն եմ եղել եւ քարոզել հօգուտ Ռ. Քոչարյանի թեկնածության»:

Այց 5

Հանուն կանանց իրավունքների

Հայաստանում էր գտնվում Սոցիալիստական ինտերնացիոնալի կանանց

կազմակերպության գլխավոր քարտուղարը, որը հանդիպումներ ունեցավ Հայաստանի կանանց բազում ներկայացուցիչների հետ: Նպատակը մեկն էր՝ բարձրացնել կնոջ դերը քաղաքական-հասարակական կյանքում:

Կառավարում 6

Գ. Մարտիրոսյանը հեռամուտ չէ

Հակառակ լուսավոր հեռանկարի մասին խոստումներին, ոռոգման ջրի պարտքերի մարումը այնքան էլ չի մտահոգում կառավարությանը եւ համապատասխան մարմիններին: Խոստումները մնում են օդի մեջ:

Ընկերային 8

Մթի եւ ցրտի զոհերը

Հետեւում մնացած «մութ եւ ցուրտ տարիներ» ծեւակերպումը շատերը հիմա ծաղրում են: Սակայն, այդ տարիները զգալի ավերներ են գործել մատաղ սերնդի ֆիզիկական կյանքում:

Կրթություն 10

Աղանդավորները չեն շրջանցում նաեւ դպրոցը

Հանրության գլխին պատուհաս դարձած աղանդավորական շարժումները, որոնք անարգել ներթափանցում են մեր հասարակության տարբեր շերտեր, ցավոք, չեն շրջանցում նաեւ դպրոցը: ԿԳ նախարար Լեւոն Մկրտչյանի խոսքով՝ երեւույթի դեմ պայքարում պետք է որդեգրել «Ոչ թե ընդդեմ, այլ հանուն» մարտավարությունը:

ملحق أزتاك

ԽՈՍՔ

Անգաղափար միավորում

Ամեն անգամ հերթական խորհրդարանական կամ արտախորհրդարանական դաշինքի, միավորման պառակտումը հասարակությանը, քաղաքական շրջանակներին կրկին կանգնեցնում է նույն կոտրած տաշտակի առաջ: Ու կրկին բոլորը արձանագրում են միևնույն իրողությունը՝ որ չի կարելի միայն ինչ-որ հերթապահ նպատակի համար, առանց գաղափարական, աշխարհայացքային ու երկրի պետական համակարգի մասին նույնական պատկերացումներ ունեցող ծրագրի միավորում ծեւավորել:

Սակայն փաստի արձանագրումից հետո դաս չի քաղվում, ու կարճ ժամանակ անց հրամցվում է ժողովրդին հերթական կազմավորումը, որի կյանքը նույն կարճ տեւողությունն է ունենալու:

Անցնող օրերին նման ներդաշինքային քարկոծումները, մեղադրանքները դրա վառ ապացույցն էին: 2001 թվականի աշնանը հայտ ներկայացրած, երկրում իշխանությունը շուտափույթ փոխելու մտադրություն ունեցող ու խոստումներ շռայլող «եռյակի» մեջ մրցակցությունը առաջին իսկ պահից նկատելի էր, թեեւ դաշինքային դեկավարությունը հերքում էր այդ կամ առնվազն լռում: Սակայն մախաթը պարկում հնարավոր չէր պահել, եւ հակասությունները ողջ «երանգապնակով» հրապարակի վրա են:

Հետագայում այս ճակատագրին են արժանանալու նաեւ այն բոլոր կազմավորումները, որոնք ստեղծվելու են պարզապես պահի ազդեցությամբ ու կարճաժամկետ նպատակադրումով, անկախ այն բանից նպատակը իշխանության հերթական փոփոխության փո՞րձն է, թե՞ խորհրդարանում մի քանի աթոռ ունենալու երազանքը: Դա պայմանավորված չէ նույնիսկ իշխանությանը դեմ լինելու կամ նրա կողմից զորակցվելու հանգամանքով:

Ի վերջո, ժամանակն է հասարակության մեջ ծեւավորել բարոյական պատասխանատվության կանչելու գիտակցությունը, որպեսզի ուժերի որեւէ միավորում չհամարձակվի միասնության, զորության իմիտացիա ստեղծելով հերթական այսրոպեական օգուտը քաղել իր շահի, աթոռի ու ամբիցիաների համար:

Անցնող օրերի հերթական ներդաշինքային պառակտումը կարող է դառնալ այդ առաջին քայլը, եւ մարդկանց առաջ դրոշ պարզող ու առանց բացատրության այն վայր նետող անձինք եւ ուժերը պետք է հասարակական գնահատական ստանան, որպեսզի նույն գունագեղությամբ ու պաթետիկությամբ չշարունակեն ճառասացությունը գործնականում զբաղվելով ստվերային ու մութ գործունեությամբ:

ՊԱՐԶ ԶՐՈՒՅՑԻ ՓՈՐՁ

Թշնամանքի թշվառությունը

Աղվան ՎԱՐԴԱՆՅԱՆ

Քեզ հարգում են, քեզ հետ բնականոն, բարեկամական, գործընկերային հարաբերություններ են հաստատում միայն այն դեպքում, երբ նախ ինքդ ես քեզ հարգում, կարողանում ես պաշտպանել քո շահերն ու իրավունքները, երբ ուժեղ ես ու կազմակերպված:

Բերեմ ընդամենը օրեր առաջ կայացած մի խոսակցություն, եւ կոնկրետ օրինակը պարզ կդարձնի, թե որքան աղավաղված է մարդկանց պատկերացումը Դաշնակցության մասին: Հերթական ճեպազրույցից հետո, ժամեր անց ինձ է զանգահարում մեր լրագրողներից մեկը: Փորձառու, բարձրակարգ (Հայաստանում այդպիսիք մի քանիսն են) լրագրողուհին ասում է.

- Պարոն Վարդանյան, Ձեր խոսքի մեջ այսօր մի տարօրինակ միտք կար, ոչ մի կերպ չեմ կարողանում հասկանալ: Խնդրում եմ՝ պարզաբանեք, որ սխալ թույլ չտամ:

- Ո՞ր միտքը,- հարցնում եմ:

- Դուք ասել եք՝ «Ցավոք, մեր երկու հարեւան պետությունների հետ մենք բնականոն հարաբերություններ չունենք»:

- Այդտեղ ի՞նչն է տարօրինակ, անհասկանալի:

- Ինչպե՞ս թե: Դաշնակցականը ասում է՝ ցավո՞ք: Ցավոք, որ Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ մեր հարաբերությունները նորմալ չե՞ն:

- Ինչ է, սխա՞լ նախադասություն է,- հարցնում եմ:

- Ձեւաբանորեն սխալ չէ, բայց գաղափարական առումով՝ Դաշնակցության տեսանկյունից...

Ահա այսպես: Մարդն անկեղծորեն կարծում է, թե Դաշնակցությունը ուրախ է, բարեբախտություն է համարում, որ մեր եւ հարեւանների հարաբերությունները այս վիճակում են:

Իհարկե՝ ցավոք: Իհարկե վատ է, որ այսպես է, հարգելի ընթերցող: Նախորդ զրույցում հստակ գրել եմ. «Մենք ատելություն, թշնամանք չենք տածում որեւէ ազգության հանդեպ: Պարզապես մենք հարգում ենք մեզ եւ նույնը պահանջում ենք մեր հարեւաններից ու միջազգային հանրությունից»:

Այո, թշնամանքը թշվառություն է:

Թշնամանքով լցված անհատը, կուսակցությունը կամ ժողովուրդը նախ ինքզինքն է քայքայում, վատնում իր կարողությունները, նվազեցնում զարգանալու, լավագույնս ինքնադրսեւորվելու իր ռեսուրսները: Այդպիսին չի կարող ազատ, անկաշկանդ, ինքնուրույն կենսագործվել:

Ատելությամբ կուրացածը ոչ միայն ներկան, այլեւ ապագան չի տեսնում: Եվ սա բացարձակ ճշմարտություն է՝ առաջին հերթին մեր ժողովրդի կենսափորձով ապացուցված ու հաստատված: Կարդանք մեր պատմությունը, մեր էպոսը, մեր մեծերին: Թումանյան կարդանք:

Սա այսպես է: Բայց սա ամենեւին չի նշանակում, թե հանուն հարեւանների հետ լավ հարաբերությունների պետք է մոռանալ ամեն բան ու միակողմանիորեն անընդհատ զիջումների գնալ:

Ընդհակառակը:

Քեզ հարգում են, քեզ հետ բնականոն, բարեկամական, գործընկերային հարաբերություններ են հաստատում միայն այն դեպքում, երբ նախ ինքդ ես քեզ հարգում, կարողանում ես պաշտպանել քո շահերն ու իրավունքները, երբ ուժեղ ես ու կազմակերպված:

Թուրքիան պետք է ճանաչի իր պատմության ընթացքում կատարած ցեղասպանական ոճրագործությունը, պետք է ընդունի իր հարեւանությամբ Հայաստան պետության լիարժեք կենսագործվելու պայմանների անհրաժեշտությունը:

Ադրբեջանը պետք է ընդունի Արցախի հայության ազատ, ինքնուրույն ապրելու իրավունքը: Լավ հարեւանությունը այլ կերպ չի լինում:

Այո, պատմության արդյունքը աշխարհագրությունն է: Սա ընդունում են բոլորը: Ուրեմն՝ պետք է ընդունել նաեւ, որ վերջին 12-14 տարիները նույնպես պատմություն են՝ իրենք արդյունք աշխարհագրությամբ:

Մեր հարաբերությունները շատ ավելի պարզ են մյուս հարեւանների՝ Վրաստանի եւ Իրանի հետ: Առկա համագործակցությունն ուղղակի անհրաժեշտ է անընդհատ զարգացնել եւ խորացնել: Բնականաբար՝ փոխադարձ շահավետությունը երաշխավորելու հիմքով: Մոտ ու հեռու այլ ժողովուրդների պարագան նույնն է ու նույնը:

Դաշնակցությունը կրկնում ու երրորդում է մեր ժողովրդի կենսափորձը. այո, թշնամանքը թշվառություն է:

Բայց նույն կենսափորձը նաեւ հաստատում է. թշվառություն է, թշվառության ամենավատ տեսակն է, երբ պատրաստ ես ամեն բան զիջել ողորմելի գոյություն քարշ տալու համար:

Այդպիսի անհատներ կան, այդպիսի կուսակցություններ կան, այդպիսի ժողովուրդներ եղել են:

Դաշնակցությունը թշնամանք չի տածում: Դաշնակցությունը ջանում է մեր ժողովրդի ու պետության լիարժեք կենսագործունեության երաշխիքներ ապահովել: Այսպես՝ արժանապատվորեն մտածող յուրաքանչյուրի հետ: Մրցակցող ու զարգացող ազգերի ընտանիքում:

Աշխատանքի ամփոփում

Մարտի 30-31-ին Երեւանում կայանալու է ՀՅԴ Հայ Դատի խորհրդի նիստը:

Նիստի աշխատանքներին կմասնակցեն աշխարհի տարբեր խոշոր կենտրոններում գործող Հայ Դատի գրասենյակների պատասխանատուները: Այս անգամ նիստի աշխատանքներին կմասնակցի նաեւ Հայ Դատի Եվրոպայի նոր ծեւավորված գրասենյակի ներկայացուցիչը:

Նիստում քննարկվելու են անցնող տարում կատարված աշխատանքների արդյունքները, որոնց ծավալը եւ աշխարհագրությունը բազմազան է սկսած մի շարք երկրների խորհրդարանների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման աշխատանքներից մինչեւ Հայաստանի տնտեսական, քաղաքական, հասարակական կյանքին վերաբերող տարբեր համաձայնությունների, որոշումների կայացումը մի շարք երկրների կառավարությունների կողմից:

Հայ Դատի ուղղությամբ աշխատանքները 2001 թ. ունեցան նաեւ լուրջ դժվարություններ ի դեմս «Թուրք-հայկական հաշտեցման հանձնախմբի» ստեղծմամբ պայմանավորված հոգեբանական խաչաձեւումի եւ շահարկումի: Սակայն այդ խմբակի լուծարումը վկայեց Հայ Դատի հանձնախմբի սկզբունքային եւ սթափ կեցվածքի արդարացիությունը:

Հայ Դատի գրասենյակների առաջ ծառացած են բազում խնդիրներ ու հարցեր, որոնց լուծմանն է նաեւ միտված լինելու հերթական հավաքը:

Նիստի աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է հանդիպում ԶԼՄ ներկայացուցիչների հետ:

Հորինված «սցենարների» հետեւորդները

էջ 1

Սակայն զավեշտականն այն է, որ հեռական միջավայրում ստեղծված սույն միֆը սկսել է լույս ընկալվել ոչ միայն իրենց հիշականների եւ լիբերալիզմի հայկական ներկայացուցիչների, այլեւ տարբեր քաղաքական ուժերի ու գործիչների կողմից նույնպես: Եվ վերջիններս, իրար հրմշտելով, իրար հերթ չտալով, վերջին օրերին սկսել են սեփական աշխարհաքաղաքական «վերլուծություններով» հարստացնել շուտափույթ իշխանափոխության մասին միֆը: Իսկ նրանք էլ, ովքեր կարողություն չունեն թեկուզ մակերեսային ու սիրողական մակարդակով վերլուծություններ անելու, պահանջում են աշխարհաքաղաքական թեմայով խորհրդարանական լսումներ անցկացնել, այլոց կարծիքները (ինչու չէ, նաեւ «բերանի գոյը») իմանալու եւ համապատասխան դիրքորոշում որդեգրելու նպատակով: Սակայն, կրկնենք, ցավոք, Հայաստանի ապագան, պետության քաղաքականության հստակեցման եւ ճշգրտման (եթե դրա անհրաժեշտությունը, իհարկե, կա) խնդիրը մղվում է երկրորդ պլան՝ տեղի տալով միֆական «սցենարների» մեջ տեղավորվելու եւ այդպիսով ինքնապահպանվելու զուտ կենսաբանական բնազդին: Ուշագրավ է դիտարկել, թե ինչպես են որոշ՝ ուժեր փորձում ամեն կերպ «ապացուցել», որ աշխարհաքաղաքական փոփոխությունների այդ առասպելական «սցենարի» հիմնական գործող անձինք հատկապես իրենք են, քանզի իրենք են ամենալիբերալն ու ամերիկամետը: Առավել ուշագրավ է, թե ի հակակշիռ այս ուժերի, ինչպես են ուրիշներն էլ պատրաստվում «ամենառուսամետի» եւ սոցիալիստի դրոշը ու փորձում հանրությանը համոզել, թե Ռուսաստանն էլ, հատկապես ի դեմս իրենց, պատրաստվում է Հայաստանում հակակշռել «ամերիկամետներին»: Զավեշտն այն է, որ ոչ առաջիններն են լիբերալ ու ամերիկամետ, ոչ էլ երկրորդները սոցիալիստ ու ռուսամետ: Պարզապես այս մարդիկ, չունենալով երկրում տեղի ունեցող գործընթացներին կառուցողական գաղափարներով մասնակցելու կամ կառուցողական գաղափարներով հակադրվելու կարողություն, հույսները դրել են աշխարհաքաղաքական փոփոխությունների միջոցով այլոց «սցենարների» մեջ տեղավորվելու ճանապարհով իրենց քաղաքական ապագան կառուցելու վրա: Ուստի, քնով պետք չէ զարմանալ, որ նրանք պատրաստ են սնգամ ոչ միայն հավատալ հորինված ու պատվիրված «սցենարներին», այլեւ տրնաջանորեն հետեւել դրանց մեջ: Բայց սա արդեն քաղաքականություն չէ, սա «աշխարհաքաղաքական» գավառամտություն է:

Արտակ ԱՐԱՄՅԱՆ

ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ

Առանցքը պաշտոնականությունն է

Ցավալի է, բայց փաստ՝ մեր քաղաքական գործիչներից շատերը, այդ թվում՝ նաեւ Արտաշես Գեղամյանը, բավական հաճախակի են վերագնահատում արժեքներն ու, ըստ այդմ փոխում իրենց դիրքորոշումները:

Սոնա ՏՐՈՒՋՅԱՆ

Ասենք, որ մեր թերթին տված հարցազրույցում պրն Գեղամյանը չէր խորշել ՀՀՇ-ին, ոչ ավել, ոչ պակաս, հրեշտակի հետ համեմատելուց հայտարարելով. «Անգամ ՀՀՇ-ի իշխանության տարիներին չկային օրը ցերեկով սպանություններ եւ հետո արդարացումներ, չկային մաֆիոզ կլաններ, որոնք տնտեսության ամբողջ լծակներն իրենց ձեռքն էին վերցրել, եւ տնտեսությունը շնչահեղձ էր լինում»: Ու սա այն դեպքում, երբ տարիներ առաջ, ավելի կոնկրետ 2000 թվականի փետրվարին «Ազգային միաբանության» առաջնորդ Արտաշես Գեղամյանը ոչ միայն հեռու էր ՀՀՇ-ի պաշտպանի դերը ստանձնելուց, այլեւ վերջինիս գործիչներին մեղադրում էր Երեւանը սառեցնելու, ազգային հարստությանը տիրանալու մեջ:

«Մենք ականատեսն ենք, որ երկրի ներսում արդեն ձեւավորվել է, այսպես կոչված, հինգերորդ շարասյունը, որտեղ ընդգրկված են հիշածին զանազան կուսակցություններ, եւ որոնք ստեղծված իրավիճակը բարենպաստ հող են համարում ռեւանշի, իշխանությունը հետ վերցնելու ճանապարհին: Երբ ուշադիր նայում ենք իրենց արդար քաղաքական գործիչ հորջորջողների դեռեւս ոչ հեռու անցյալի կենսագրությանը, տեսնում ենք, որ դրանք այն մարդիկ են, ում ոտք եւ ում ձեռքերով իրականացվել է էներգետիկ տեռորը, ում օրոք Երեւան քաղաքը սառել է, տեղի են ունեցել քաղաքական սպանություններ, ովքեր փոշիացրել են շուրջ 650 մլն ԱՄՆ դոլարին համարժեք արտասահմանյան վարկերը, ովքեր ջրի գնով տիրել են ազգային հարստությանը, եւ այժմ, երբ տեսնում են, որ հնարավոր է արդարությունը վերականգնվի, ոճիրների կծիկը բացվի, բնականաբար, համախմբվում են»,- հայտարարել էր Արտաշես Գեղամյանը 2000 թվականի փետրվարին:

Դժվար է հասկանալ, թե ո՞րն է երկու տարվա ընթացքում 180 աստիճանով փոփոխված դիրքորոշման պատճառը, եւ ինչո՞ւ պրն Գեղամյանն այլեւս չի կարծում, որ հիշածին կուսակցությունների համախմբման պատճառը «ոճիրների կծիկի» բացվելու մտահոգությունն է: Առավել եւս, երբ այսօր այդ համախմբումն առավել քան իրական է, ինչի վկայությունն է նաեւ «21-րդ դար» կուսակցության նախագահ Դավիթ Շահնազարյանի անցումը ՀՀՇ շարքեր: Ի՞նչ է, ՀՀՇ-ն փոշիացրած արտասահմանյան վարկե՞րն է վերադարձրել, թե՞ մեղա է եկել իրականացրած քաղաքական սպանությունների համար: Կարող ենք պնդել, որ տեղի չի ունեցել ոչ մեկը, ոչ էլ մյուսը, իսկ «Առագաստ» սրճարանում տեղի ունեցած սպանության դատապարտումը հիշականների կողմից ամենեւին չի կարող ոչ միայն արդարացնել, այլեւ անգամ մեղմել վերջիններիս առաջնորդների ապօրինի հրահանգներով կատարված սպանությունների ծանրությունը: Առավել եւս, երբ ոչ ոք չի կարող երաշխավորել, որ Պողոս Պողոսյանի սպանության դատապարտումով հիշականներն անընդունելի են համարում բռնություններն ու անօրինականությունները ընդհանրապես եւ ոչ թե դա օգտագործում քաղաքական ինչ-ինչ դիվիդենտներ շահելու համար, հատկապես եթե նկատի ունենանք, որ այդ նույն հիշականները ջանք չեն խնայում շուրջ մեկ տասնյակ անձանց սպանությունները կազմակերպելու մեջ մեղադրվող Սիրադեղյանին պատգամավոր դարձնելու համար: Սա էլ հիմք է տալիս ենթադրելու, որ ՀՀՇ-ի նկատմամբ Արտաշես Գեղամյանի բարյացակամ վերաբերմունքը պայմանավորված է ոչ թե նրանով, որ ՀՀՇ-ն ապաշխարել է (քանզի չի ապաշխարել), այլ տվյալ փուլում շահերի համընկնումով, եւ նրանց հնարավոր համագործակցության առանցքը ոչ թե երկրում արդարություն հաստատելու բարի ցանկությունն է, այլ ընդամենը գործող նախագահի պաշտոնանկությունը: Ասել է թե այս հարցը «Ազգային միաբանության» առաջնորդի համար դարձել է գերնպատակ, եւ նա պատրաստ է մինչեւ անգամ հրապարակավ սեւը սպիտակ ներկայացնել:

ԼՈՒՐԵՐ

Սպասվող նշանակումը մնաց առկախ

Մարտի 28-ին նախագահին առընթեր Մարդու իրավունքների հանձնաժողովի նոր նախագահի սպասվող նշանակումն այդպես էլ չկայացավ: Հանձնաժողովը շարունակեց իր աշխատանքը եւ անցավ նախօրոք հաստատված օրակարգի հարցերի քննարկմանը: Նիստը վարում էր փոխնախագահ Հովհաննես Ասրյանը:
Քննարկման առանցքում հանրապետության նախագահին ներկայացվելիք արցախահայության իրավունքների պաշտպանության վերաբերյալ նախագծի մեջ որոշակի բովանդակային փոփոխություններ կատարելու հարցն էր: Հանձնաժողովի որոշումը հետեւյալն էր. «ՀՀ նախագահի ուշադրությունը հրավիրել ՀՀ կողմից ԼՂՀ պաշտոնական ճանաչման հարցը պետական իրավասու մարմինների կողմից անհապաղ քննարկման առարկա դարձնելու հրամայականի վրա եւ այդ հարցում մարդու իրավունքների պաշտպանության միջազգային նորմերին համապատասխան կողմնորոշվելու անհրաժեշտության վրա»: Որոշվեց տեքստում «ԼՂՀ պաշտոնական ճանաչման հարցը» պարբերությունը փոխարինել «Արցախահայության ինքնորոշման սկզբունքից բխող քաղաքացիական եւ սոցիալական իրավունքների պաշտպանություն» պարբերությամբ: Այս որոշումը հիմնավորվեց նրանով, որ հանձնաժողովի իրավասության մեջ մտնում է մարդու իրավունքներին առնչվող հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելու խնդիրը եւ ոչ երբեք քաղաքական: Հանձնաժողովն անդրադարձավ Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների հետ կառուցվածքային համագործակցության զարգացման վերաբերյալ քննարկվող հարցերին: Հիմնական զեկուցող Լարիսա Ալավերդյանը նշեց, որ կարեւոր է ունենալ հատուկ մշակված ծրագիր հասարակության ավելի լայն խավերի հետ աշխատելու համար, ոչ թե սահմանափակվել միայն անհատական դիմումներով: Որոշվեց ապագայում արտագնա նիստեր հրավիրել մարզերում հասարակության մեջ սուկս մարդու իրավունքների խախտման դեպքերն արձանագրելու եւ շտկելու համար:

Կ. ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ

Ավելորդ փագնապ

Երեկ Ժուռնալիստի տանը «Ազատագրված տարածքների պաշտպանության» (ԱՏՊ) հասարակակցն նախաձեռնության մի խումբ անդամներ մամլո ասուլիս էին հրավիրել հայկական ԶԼՄ ներկայացուցիչներին տեղեկացնելու տարածաշրջանում ծավալվող իրադարձությունների ֆոնի վրա Հայաստանին եւ Լեռնային Ղարաբաղին սպառնացող իրական վտանգների մասին: Ըստ քաղաքագետ Իգոր Մուրադյանի Հայաստանի իշխանությունները բավականին ուշացած են արձագանքում այս կամ այն փոփոխությանը, ինչի հետեւանքով մենք տանուլ ենք տալիս քարոզչական պատերազմը: Հաշվի առնելով Ռուսաստանի աստիճանաբար թուլացող ազդեցությունը մեր տարածաշրջանում եւ նկատի ունենալով Թուրքիայի ԱՄՆ ազդեցությունից դուրս գալու լուրջ միտումները մեզ հարկ է որդեգրել կոմպլեմենտար քաղաքականություն, հանդես բերել այնպիսի ճկունություն, որպեսզի վնաս չհասցվի Ղարաբաղյան պատերազմում մեր ձեռքբերումներին: Նա հարկ համարեց լրագրողներին տեղեկացնել նաեւ, որ Ղարաբաղյան խնդրի նկատմամբ Ռուսաստանը որդեգրել է չեզոք դիրքորոշում, որ, նույնն իրադարձությունների հետագա ծավալման, կարող է ունենալ եւ դրական, եւ բացասական ազդեցություն: Միաժամանակ հայտարարեցին, որ իրենց աշխարհաքաղաքական մեկնաբանությունները հիմնված են քիվեսթյան եւ փարիզյան բանակցություններից հայտնի տեղեկությունների վրա միայն, որոնք էլ հիմա վերլուծվում են մասնավորապես Վրաստանում եւ ընդհանրապես Անդրկովկասում ծավալվող իրադարձությունների համայնապատկերում:
Ինչից էլ կարելի էր եզրակացնել, որ արտաքին ճակատում ՀՀ իշխանությունների կրավորական դիրքորոշման մասին հայտարարությունները առայժմ ժամանակավրեպ են:

Է.Դ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

29 ՄԱՐՏ-4 ԱՊՐԻԼ, 2002 #10/1661/

Ընտրությունների արդյունքները չեն վիճարկվում

հայտարարում է Ալբերտ Բազեյանը

Շուտով կլրանա Ռոբերտ Քոչարյանի պաշտոնավարության 4-րդ տարին, սակայն դեռ շարունակվում են շահարկվել 1998 թ. նախագահական ընտրությունների արդյունքները: Որքանով են այդ շահարկումները հիմնավոր. այս եւ ներքաղաքական զարգացումների մասին «Երկիր»-ի թղթակցի խնդրանքով իր դիտարկումներն է ներկայացնում «Հանրապետություն» կուսակցության քաղաքական խորհրդի նախագահ ***ԱԼԲԵՐՏ ԲԱԶԵՅԱՆԸ:***

- Վկայակոչելով ԱՄՆ պետդեպարտամենտի զեկույցը՝ «Ազգային միաբանության» առաջնորդ Արտաշես Գեղամյանը շեշտում է, թե 100 հազար քվեաթերթիկ է կեղծվել 1998 թ. ընտրությունների ժամանակ հօգուտ Ռոբերտ Քոչարյանի: Այն ժամանակ դուք պաշտպանում էիք նրա թեկնածությունը, եւ Ձեր կարծիքով, Ռ. Քոչարյանը լեգիտիմ է:

- Դրսում կարող են տարբեր քաղաքական շահախնդրություններ լինել եւ տարբեր տեսակի կարծիքներ հրապարակվել, ուստի մենք իշխանության լեգիտիմությունը պետք է որոշենք իշխանությունների նկատմամբ մեր քաղաքացիների վերաբերմունքով: Գուցե ինչ-որ կեղծիքներ եղել են. ցանկացած ընտրություններում դրանք կարող են նաեւ չբացառվել, բայց մեր մոտեցումը մեկն է ՀՀ քաղաքացիները պետք է վստահեն ընտրության արդյունքներին եւ հավատան իրենց ընտրությանը: Լեգիտիմության հարցը միայն ընտրությունների արդյունքներով չէ, որ որոշվում է: Իշխանություններն իրենց գործունեության ընթացքում կարող են դառնալ նաեւ ոչ լեգիտիմ, եթե չեն վայելում հասարակության գերակշիռ մեծամասնության վստահությունը:

- Կներեք, բայց պետք է կրկնեմ հարցս. Ձեր կարծիքով, 1998 թվականի նախագահական ընտրությունների ժամանակ Ռոբերտ Քոչարյանը քվեաթերթիկների մասսայական կեղծումներո՞վ է ընտրվել ՀՀ նախագահ:

- Չգիտեմ, որովհետեւ որեւէ ընտրական հանձնաժողովի անդամ չեմ եղել, որեւէ կեղծիքի չեմ մասնակցել, եղել եմ ընդամենը Ռ.Քոչարյանի վստահված անձերից մեկը եւ քարոզել հօգուտ նրա թեկնածության:

- Բայց ինձ տված հարցազրույցում Արտաշես Գեղամյանը հայտարարել էր, թե երկրապահական թեւը հրապարակավ թողություն է խնդրել ժողովրդից՝ «խոստովանելով, որ, այո՛, կեղծել են նախագահական ընտրությունները, այո՛, տասնյակ հազարավոր քվեաթերթիկներ են գցել քվեատուփի մեջ»:

- Չգիտեմ, թե ովքեր են նման հայտարարություններ հնչեցրել. ես նման հայտարարություններ երբեք չեմ արել: Այո՛, մենք մեղքի ինչ-որ բաժին ունենք, որ ներկայումս պաշտոնավարում է Ռոբերտ Քոչարյանը, բայց ոչ այդ առումով: Չգիտեմ, թե երկրապահներից ովքեր եւ երբ են այդպիսի հայտարարություններ արել. ես նման հայտարարությունների ծանոթ չեմ: Ճիշտ է, հասարակության մեջ կան այնպիսի տրամադրություններ, կարծիքներ, որ Ռ.Քոչարյանի օգտին որոշակի ընտրակեղծիքներ կատարվել են, եւ ճիշտ հաշվարկների դեպքում, գուցեեւ ՀՀ նախագահի ընտրվեր ոչ թե Ռ.Քոչարյանը, այլ Կ.Դեմիրճյանը, բայց այն ժամանակ ընդդիմության կողմից չվիճարկվեցին ԿԸՀ-ի կողմից հրապարակված ընտրությունների արդյունքները, եւ դրանք ընդունել ենք որպես ի գիտություն:

- Իսկ այսօր վիճարկո՞ւմ եք:

- Երբեք չենք հայտարարել, թե վիճարկում ենք Ռ.Քոչարյանի ընտրության արդյունքները, այլ որ Ռ.Քոչարյանը, լինելով դատական մարմինների անկախության երաշխավորը, չի ապահովում դատական մարմինների անկախությունը, լինելով երկրի անվտանգության երաշխավորը չի կարողացել ապահովել պետական մարմինների անվտանգությունը, եւ որ վատ օրինակ է ծառայում բազմիցս խախտելով մեր երկրի օրենսդրությունն ու Սահմանադրությամբ ամրագրված նորմերը:

- Ժամանակին եռյակը բավականին մեծ խոստումներով ելավ քաղաքական թատերաբեմ, սակայն այսօր արդեն կարծիքներ են հնչում, որ այն այլեւս գոյություն չունի: Ինչո՞ւ:

- Եռյակը ձեւակերպել է իր խնդիրները համատեղ հայտարարությամբ, այսինքն սահմանադրական ճանապարհներով հասնել Ռոբերտ Քոչարյանի պաշտոնանկությանը եւ ստանձնել ազատ, արդար ընտրությունների ճանապարհով օրինական իշխանություն ձեւավորելու պատասխանատվություն: Այս երկու քաղաքական խնդիրների շուրջ որոշակի ժամանակահատված, անկախ արդյունքից, համագործակցել ենք, եւ այսօր էլ այդ նույն խնդիրը մնում է օրակարգում: Քաղաքական տարբեր խնդիրների վերաբերյալ կարող են լինել տարբեր մոտեցումներ կամ տարաձայնություններ, բայց նշված երկու հարցերի առումով մոտեցումները նույնն են, եւ համագործակցությունը շարունակելու ենք:

- Ձեր մատնանշած հարցերի շուրջ քաղխորհրդի անդամ Սուրեն Սուրենյանցը չի բացառել նաեւ աջ ուժերի դաշինքի հետ համագործակցությունը: Որքանո՞վ է սա հավանական:

- Պատրաստ ենք համագործակցել բոլոր այն քաղաքական ուժերի հետ, որոնք նպատակադրվել են Հայաստանում ձեւավորել օրինական իշխանություններ, այդ թվում նաեւ աջ ուժերի դաշինքի, եթե նրանք նույն նպատակն են հետապնդում:

- Բայց գաղտնիք չէ, որ աջ ուժերի առանցքում ՀՀՇ-ն է, որի իշխանության տարիներին Հայաստանում անցկացված բոլոր ընտրությունների արդյունքները կեղծվել են: Հետեւապես, ինչպե՞ս կարող են հավատ ներշնչել արդար ընտրությունների անցկացմանը հետամուտ լինելու նրանց հայտարարությունները:

- Ոչ միայն ՀՀՇ-ի իշխանության օրոք են կեղծվել ընտրությունների արդյունքները: Երբեք չենք ժխտել, որ ընտրական կեղծիքների մեխանիզմները մշակվել են հենց ՀՀՇ-ի իշխանության տարիներին, որ 1995 թվականից է սկսվել ընտրակեղծիքների կիրառումը, եւ որ դրան հաջորդած բոլոր ընտրություններում էլ որոշակի չափով կատարվել են ընտրակեղծիքներ: Բայց դրա հնարավորությունը միշտ ունեցել եւ ունենում է գործող իշխանությունը վարչական լծակներով, ուժային կառույցներով ազդելով ընտրությունների արդյունքների վրա: Այսօր կեղծիքներ կարող են անել միայն իշխանությունները, այլ ոչ թե ընդդիմադիր քաղաքական ուժերը, որոնք որեւէ վարչական, ադմինիստրատիվ կամ այլ ուժային լծակներ չունեն:

- Նշված ուժերի հետ համագործակցությունը կարո՞ղ է վերածվել դաշինքի, հատկապես խորհրդարանական ընտրությունների նախաշեմին:

- Մեկ հարցի շուրջ համագործակցությունը չենք կարող ընկալել որպես դաշինքային հարաբերություններ: Օրինակ, Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման հայանպաստ տարբերակի շուրջ կարող են համագործակցել բոլոր քաղաքական ուժերը: Բայց դաշինքային հարաբերություններ կարող են ստեղծվել միայն քաղաքական առանցքային խնդիրների վերաբերյալ միասնական մոտեցումներ ունենալու դեպքում:

- Արտաշես Գեղամյանը հավանական է համարել եռյակի անդամ կուսակցությունների եւ «Սոցիալիստական Հայաստան» միավորման «կուռ, ամուր դաշինքի» ստեղծումը: Համակարծի՞ք եք:

- Ամենասերտ համագործակցությունը եւ ոչ թե դաշինքի ստեղծումը: «Սոցիալիստական Հայաստանը» հայտարարվել է որպես քաղաքական միավորում հրապարակելով որոշ ծրագրային դրույթներ: Եվ պետք է ասեմ, որ մեր ծրագրային դրույթներով որոշակի տարբերություններ ունենք այդ միավորման որդեգրած գաղափարախոսության հետ: Այնպես որ, ժամանակը ցույց կտա, թե որքանով է հնարավոր դաշինքի ստեղծումը, բայց, կրկնում եմ, լիարժեք, կուռ քաղաքական դաշինք հնարավոր է միայն այն դեպքում, եթե դաշինքի անդամները, բաղադրիչ մասերը քաղաքական հարթությունում չունեն էական տարաձայնություններ:

- Իսկ այսօր «Հանրապետություն» կուսակցությունը ո՞ր ուժերի հետ չունի էական տարաձայնություններ:

- Առաջին հերթին ՀԺԿ-ի հետ, որովհետեւ այդ նույն կուսակցության հետ եղել ենք մի դաշինքի կազմում եւ 1999թ. ընտրությունների ժամանակ առաջնորդվել մոտավորապես նույն գաղափարներով ու ծրագրերով: Եվ գտնում ենք, որ լուրջ հնարավորություններ կան հետագայում ՀԺԿ-ի հետ ունենալու դաշինքային հարաբերություններ: Քննարկման խնդիր է «Ազգային միաբանության» հետ դաշինքային հարաբերությունների հարցը, եւ սպասում ենք նրանց հայտարարած հակաճգնաժամային ծրագրի հրապարակմանը:

- Բայց կարծիքներ են հնչում, որ Արտաշես Գեղամյանը կատարում է Ռոբերտ Քոչարյանի եւ Սերժ Սարգսյանի պատվերը:

- Օդում կախված տեսակետներով, կարծիքներով չենք առաջնորդվում, իսկ նման փաստեր չունենք:

- «Հանրապետություն» կուսակցությունը ինչպե՞ս է մասնակցելու 2003 թվականին կայանալիք նախագահական ընտրություններին, ունե՞ք ձեր թեկնածուն:

- 2003 թ. տեղի են ունենալու խորհրդարանական եւ նախագահական հերթական ընտրությունները, բայց մեր երկրում բացառված չեն արտահերթ ընտրությունները, եւ չեմ բացառում, որ նախընտրական նպատակահարմարությունից ելնելով կամ քաղաքական ինչ-ինչ խնդիրներ լուծելու համար Ռոբերտ Քոչարյանը ինչ-որ պահի լուծարի ԱԺ-ն, եւ տեղի ունենան արտահերթ ընտրություններ, կամ ինչ-որ մի պահի հասնենք Ռ.Քոչարյանի պաշտոնանկությանը: Իսկ, ընդհանրապես, ակտիվորեն մասնակցելու ենք թե տեղական ինքնակառավարման մարմինների, թե ապագայում սպասվելիք խորհրդարանական, նախագահական ընտրություններին: Կուսակցությունն ունի նախագահի իր թեկնածուն Արամ Սարգսյանը, բայց, եթե ընդդիմության կողմից ձեւավորվի լուրջ համագործակցություն, հաջողվի հարթել բոլոր եզրերը, եւ որոշվի ընտրություններին մասնակցել միասնական թեկնածուով, ապա պատրաստ ենք նաեւ զարգացման այդ տարբերակին, եւ միասնական այդ թեկնածուն կարող է նաեւ չլինել մեր կուսակցության թեկնածուն:

Ընդհանրապես հակված ենք նախագահական ընտրություններին մասնակցել միասնական թեկնածուով, իսկ խորհրդարանական ընտրությունների ժամանակ դաշինքային հարաբերությունների մեջ մտնել մեր գաղափարները կիսող քաղաքական ուժերի հետ: Չենք գերագնահատում մեր հնարավորությունները եւ կցանկանայինք միասնական քաղաքական պատասխանատվություն ստանձնելու հնարավորություն լիներ, որովհետեւ ցանկացած առանձին քաղաքական ուժի համար դժվար է ապահովել ամբողջական կառավարման համակարգի ձեւավորումը եւ պատասխանատվություն ստանձնել: Քաղաքական ուժերը պետք է փորձեն միասնական պատասխանատուություն ստանձնել, քանզի, անկախ ամեն ինչից, մանրացած է Հայաստանի քաղաքական դաշտը:

Զրուցեց Սոնա ՏՐՈՒՋՅԱՆԸ

Ընդհանրապես հակված ենք նախագահական ընտրություններին մասնակցել միասնական թեկնածուով, իսկ խորհրդարանական ընտրությունների ժամանակ՝ դաշինքային հարաբերությունների մեջ մտնել մեր գաղափարները կիսող քաղաքական ուժերի հետ: Չենք գերագնահատում մեր հնարավորությունները եւ կցանկանայինք միասնական քաղաքական պատասխանատվություն ստանձնելու հնարավորություն լիներ, որովհետեւ ցանկացած առանձին քաղաքական ուժի համար դժվար է ապահովել ամբողջական կառավարման համակարգի ձեւավորումը եւ պատասխանատվություն ստանձնել:

Հանուն կանանց իրավունքների

Մարտի 23-26-ը ՀՅԴ հրավերով Երեւանում էր Սոցիներնին մաս կազմող Միջազգային սոցիալիստ կանանց կազմակերպության գլխավոր քարտուղար Մարլեն Հասանը: Կարեւորելով այս այցի նշանակությունը հայ կանանց իրավունքների եւ հասարակության մեջ նրանց դերի բարձրացման առումով՝ կուսակցությունը մի շարք հանդիպումներ էր նախատեսել Հայաստանում գործող կանանց հասարակական, քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Կարինե
ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ

Առաջին հանդիպումը ՀՅԴ Բյուրոյի եւ Հայաստանի ԳՄ հետ էր, որտեղ ընդհանուր քննության նյութ դարձավ Հայաստանում կնոջ դերը երկրի քաղաքական, հասարակական կյանքում, ինչպես նաեւ կուսակցության մեջ:

ՀՅԴ ներկայացուցիչները ներկայացրեցին ընդհանուր պատկերը, մասնավորապես ՀՅԴ շահագրգռվածությունը այս խնդրում, ինչի լավագույն վկայություններից մեկը 1999 թ. ԱԺ ընտրություններում ՀՅԴ համամասնական ցանկում կանանց ծանրակշիռ թիվն էր:

Տիկին Հասան իր խոսքում նշեց, որ Հայաստանն իսկապես ունեցել է լավ ավանդույթներ, որի արտահայտություններից մեկը 1918 թ. Հայաստանի առաջին Հանրապետությունում կանանց ու տղամարդկանց քվեարկության իրավունքի համահավասարեցումն էր եւ խորհրդարանում լայն ներկայությունը:

Մարլեն Հասանը Հայաստան այցի ընթացքում, ինչպես նախատեսված էր, հանդիպեց մի շարք հասարակական կազմակերպությունների, նաեւ այսօր քաղաքական, պետական ասպարեզում գործող հայ կանանց հետ: Երկու կողմերն էլ, կարեւորելով նման հանդիպումները, նշեցին, որ եթե կինը առաջ է քաշում եւ ուզում է պաշտպանել հասարակության մեջ կնոջ դիրքի բարելավման, նրա գիտելիքների օգտակարության անհրաժեշտությունը, յուրաքանչյուր պետության առաջընթացի համար թերեւս չի կարելի այս դիրքորոշումը դիտարկել որպես որոշակի չբավարարված ամբիցիաների, ինքնանպատակ ծրագրեր իրականացնելու համար միակ միջոց:

Հանդիպման ընթացքում ողջունելով գլխավոր քարտուղարին՝ ՀՅԴ խորհրդարանական խմբակցության պատգամավոր Ալվարդ Պետրոսյանը նկատեց, որ այն դերը, որը չտրվեց հայ կնոջը քաղաքական ասպարեզում, հայ կինը փոխհատուցեց հասարակական կազմակերպությունների միջոցով ծավալվող գործունեությամբ: Ինչպես նշեց կանանց խորհրդի նախագահ Ն. Հակոբյանը,- «վերջին տասնամյակում հայ կինը, իհարկե, փոքր-ինչ հետընթաց ապրեց, հայտնվեց ստվերում եւ հիմնականում սոցիալական դժվարությունները, կապված գործազրկության, արտագաղթի հետ, ստիպեցին նրան ոչ կամովին ներփակվել ու որդեգրել միմիայն դիտորդի կարգավիճակ: Ի հավելումն, «Արդարություն եւ իրավունք» հասարակական կազմակերպության նախագահ Անահիտ Բաղդասարյանը տեղեկացրեց, որ 1997 թվին ՄԱԿ-ի Հայաստանին վերաբերող տեղեկագրում է գնահատված հայ կնոջ դերի բացառիկությունը վերջին տարիներին երկրի ամրության եւ ցնցումներից խուսափելու գործում:

Ողջունելով հայ կնոջը, նրա քննարկումների, պարզ եւ անկեղծ զրուցելու պատրաստականությունը՝ Մարլեն Հասան ասաց, որ ինքը պարզապես զարմացած է հայ կնոջ ինտելեկտով, նրա կարծիքների առանձնահատկությամբ եւ փոքր-ինչ զայրացած է, որ Հայաստանում, որտեղ բարձրագույն կրթություն ունեցողների 60 տոկոսը կանայք են, խորհրդարանի պատգամավորների 97 տոկոսը տղամարդիկ են: «Այդ իսկ պատճառով, ՀՅԴ ղեկավարության հետ հանդիպումների ընթացքում ես անընդհատ շեշտում էի, որ երեւույթը կարելի է վերափոխել՝ սկսելով կուսակցության ներսում կնոջ դերի բարձրացման համար գործնական քայլերով»: Մամուլի ազգային ակումբի նախագահ Նարինե Մկրտչյանը նկատեց, որ քվոտաների բարձրացումը չպետք է արհեստական լինի, այլ քաղաքական ասպարեզ պետք է գան այնպիսի կանայք, որոնք ասելիք եւ անելիք ունեն: «Կայուն զարգացում» կազմակերպության նախագահ Կարինե Դանիելյանը նշեց, որ Հայաստանում որեւէ օրենքով խտրականություն դրված չէ կնոջ եւ տղամարդու իրավունքների մեջ, ու երեւույթը, ըստ էության, արդյունք է սոցիալական իրավիճակի:

ՌԵՍԻՆՅԱՆԻ Ամոնիցոնում

ՀՕՄ-ի հետ հանդիպումը տեղի ունեցավ միության գրասենյակում: ՀՕՄ-ի ատենապետուհի Նելլի Բաղդասարյանը, ներկայացնելով միության իրականացրած ծրագրերը, նշեց, որ դրանք կատարվում են կամավոր սկզբունքներով, եւ այն 16000 կանայք, որ ամբողջ աշխարհում ընդգրկված են այս կազմակերպության մեջ, ապացուցում են, որ կնոջ նշանակությունը հասարակության տարբեր օղակներում կարող է միայն օգտավետ լինել:

ՀՅԴ անդամ կանանց հետ հանդիպման ընթացքում հիմնականում առաջ քաշվեց այն միտքը, որ անհրաժեշտ է կուսակցության ներսում ստեղծել կանանց մի կառույց եւ համագործակցել Սոցինտերնի կանանց կազմակերպության շրջանակներում:

Մարլեն Հասանը հանդիպեց նաեւ ՀՅԴ խորհրդարանական խմբակցության, «Ալիք» արհմիության անդամների հետ: Արհմիության հետ հանդիպման ժամանակ տիկին Հասանը հետաքրքրվեց արհմիության մեջ ներգրավված կազմակերպությունների այն ոլորտներով, որտեղ շատ են հիմնականում կանանց հիմնախնդիրները:

Հայաստան այցի ընթացքում տկն. Հասանը մասնակցեց նաեւ ՀՅԴ Էրեբունու կոմիտեության կազմակերպած ծառատունկ-դաշտահանդեսին:

Այցի տրամաբանական ավարտը ՀՅԴ «Սիմոն Վրացյան» կենտրոնում կայացած մամուլի ասուլիսն էր, որտեղ պատասխանելով լրագրողների հարցերին՝ գլխավոր քարտուղարը միաժամանակ ամփոփեց այցի արդյունքները եւ հույս հայտնեց, որ դրանք թղթի վրայից կվերածվեն գործի:

Ճանաչողական այց՝ հեռահար ծրագրով

Կալիֆոռնիայի նահանգը, եթե առանձին պետություն լիներ, տնտեսության ներուժով աշխարհում 7-րդ տեղն էր գրավելու: Այս ներուժը կարող է մեծ օգուտ բերել նաեւ Հայաստանին, ինչի ուղղությամբ երկար ժամանակ ակտիվ աշխատանք է իրականացնում ՀՅԴ Արեւմտյան Ամերիկայի Հայ Դատի հանձնախումբը: Այդ աշխատանքները քաղաքական բեմում վարում է նաեւ նահանգային սենատոր Ջեք Սքոթը: Վերջինս, Դաշնակցության հրավերով, Հայ Դատի հանձնախմբի ներկայացուցիչներ Արթին Մանուկյանի եւ Պերճ Կարապետյանի ուղեկցությամբ մարտի 22-26-ը այցելել էր Հայաստան:

Ճանաչողական այցի ընթացքում սենատոր Սքոթը առավել մանրամասն ուսումնասիրեց Հայաստան-Կալիֆոռնիա առեւտրական հարաբերությունների հարցը:

Անցյալ տարի Հայաստանի եւ Կալիֆոռնիայի նահանգի միջեւ կնքվել էր համագործակցության մասին հուշագիր, որի ուղղություններից մեկը Երեւանում Կալիֆոռնիայի առեւտրային գրասենյակի ստեղծումն է, ինչը նպաստելու է կողմերի միջեւ առեւտրական կապերի զարգացմանը: Այցի վերջին օրը ՀՅԴ «Սիմոն Վրացյան» կենտրոնում կայացած ասուլիսի ժամանակ Ջեք Սքոթը նշեց, որ շատ տպավորված է հանրապետության պաշտոնական շրջանակներից ստացած հանդիպումներից, եւ հայտնեց, որ վերադառնալուն պես Կալիֆոռնիայի սենատին կներկայացնի առեւտրային գրասենյակի բացման վերաբերյալ օրինագիծը, որն ընդունելուց եւ նահանգապետի կողմից վավերացնելուց հետո արդեն կարող են ծեռնամուխ լինել գրասենյակի հիմնման աշխատանքներին:

Հայաստանում առաջին օրը սենատորը Աղվան Վարդանյանի եւ Արմեն Ռուստամյանի ուղեկցությամբ այցելել է Ամենայն Հայոց կաթողիկոսին: Նորին սրբությունը, ողջունելով սենատորին, բարձր է գնահատել նրա ջանքերը նահանգային օրենսդիր մարմնում Հայոց Մեծ եղեռնի խնդիրը բարձրացնելու եւ պաշտպանելու համար:

Այցի ընթացքում Ջեք Սքոթը հանդիպումներ է ունեցել նաեւ ՀՀ ԱԺ փոխնախագահ Տիգրան Թորոսյանի, ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Արտաշես Թումանյանի, ՀՀ քաղաքաշինության նախարար Դավիթ Լոքյանի, տարածքային կառավարման եւ արտադրական ենթակառուցվածքները համակարգող նախարար Հովիկ Աբրահամյանի, պետեկամուտների նախարար Երվանդ Զախարյանի, ֆինանսների եւ էկոնոմիկայի փոխնախարար Պավել Սաֆարյանի հետ:



Գոհունակությամբ ընդունելով սենատորի վերոհիշյալ առաջարկը պետական շրջանակներն արձանագրել են, որ Հայաստանում այսօր նպաստավոր պայմաններ են ստեղծված օտարերկրյա ներդրումների համար:

Առանձին շահեկան հանդիպում կայացավ ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի հետ: Հիշեցնելով, որ անցած տարվա նոյեմբերին Կալիֆոռնիայի նահանգի պատվիրակության հետ հանդիպումից հետո կարճ ժամանակամիջոցում նահանգի ու Հայաստանի միջեւ արդեն իսկ ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր առեւտրատնտեսական կապերի զարգացման վերաբերյալ, կազմակերպվել եւ նախատեսվում են տարաբնույթ գործարար համաժողովներ եւ ցուցահանդեսներ վարչապետը համոզմունք հայտնեց, որ սենատորի այս առաջարկը եւս հաջողություն կունենա, կնպաստի հայ-ամերիկյան քաղաքական ու տնտեսական կապերի էլ ավելի սերտացմանը:

Առանձին հանդիպում տեղի ունեցավ նաեւ ԱԺ ՀՅԴ պատգամավորական խմբակցության հետ:

Վերջին օր հյուրերը այցելեցին Վանաձոր, որը Կալիֆոռնիայի Փասադենայի հետ քույր քաղաք է:

Ամփոփելով այցը նահանգային սենատոր Սքոթը նշեց, որ շատ տպավորված է հանրապետության պաշտոնական շրջանակների մոտեցումներից, եւ հայտնեց, որ վերադառնալուն պես Կալիֆոռնիայի սենատին կներկայացնի առեւտրային գրասենյակի բացման վերաբերյալ օրինագիծը, որն ընդունվելուց եւ նահանգապետի կողմից վավերացնելուց հետո արդեն կարող են ծեռնամուխ լինել գրասենյակի հիմնման աշխատանքներին: Սենատորը համագործակցությունը տեսնում է հատկապես սեյսմիկ պաշտպանության, շինարարության, բարձր տեխնոլոգիաների, ինչպես նաեւ գյուղատնտեսության (մթերքների արտահանման առումով) բնագավառում:

ԱԺ ՀՅԴ խմբակցության նախագահ Աղվան Վարդանյանը կարեւորեց այս այցը նշելով, որ 34 միլիոն բնակչություն ունեցող Կալիֆոռնիան կարող է դառնալ հայկական ապրանքի սպառման լավ շուկա: «Մեր այս նախաձեռնությամբ մենք փորձում ենք գործնական աջակցություն ցուցաբերել հայրենի արդյունաբերողներին»,- ասաց նա:

29 ՄԱՐՏ-4 ԱՊՐԻԼ, 2002 #10/1661/

Գագիկ Մարտիրոսյանը հետամուտ չէ

Ոռոգման ջրի եւ դրա մատակարարման նպատակով ծախսված էլեկտրաէներգիայի պարտքերի գոյացման ու մարման ոլորտում առկա բացթողումները, կարծես թե, այնքան էլ չեն մտահոգում ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեին եւ նրա ղեկավար Գագիկ Մարտիրոսյանին: Համենայն դեպս, փաստ է, որ վերջինս վիճակը շտկելու ուղղությամբ միջոցներ չի ձեռնարկում:

Սոնա ՏՐՈՒՋՅԱՆ

Բացթողումները վերացնելու ուղղությամբ Գագիկ Մարտիրոսյանը խոստացել էր միջոցներ ձեռնարկել, սակայն, ըստ մեր ունեցած տեղեկությունների, անցած 5 ամիսների ընթացքում սայլը տեղից չի շարժվել, եւ խոստումները գործի չեն վերածվել: Հենց դա է հիմք տալիս ենթադրելու, որ իրականում նրան այնքան էլ չեն հուզում (գուցե նաեւ ձեռնտու է) այսօրինակ բարձիթողի վիճակը, ահռելի մեծ չափերի հասնող պարտքերի գոյացման պատճառները:

Հիշեցման կարգով արձանագրենք, որ ՀՀ դատախազության դեռեւս 2001 թ. հոկտեմբերի 25-ին տեղի ունեցած կոլեգիայի նիստում, որին ներկա էր նաեւ Գ. Մարտիրոսյանը, հնչեցվել էր, որ մեծ չափերի են հասնում ջրամատակարար կազմակերպությունների պարտքերը էներգահամակարգին, որ գլխերեւ անհնար է լինում պայքարել, թե ինչով է պայմանավորված ջրամատակարարման դադարեցումը՝ վարձավճարները չգանձելո՞ւ, թե՞ գանձված վարձավճարները սահմանված կարգով չմուտքագրելու հետ: Կամ համայնքի բնակիչներին վճարման համար ներկայացված ջրի ծավալներն ուրիշո՞ք համապատասխանում են փաստացի մատակարարված ծավալներին, թե՞ ոչ: Ավելին, ոռոգման ջրի վարձավճարների հաշվարկման եւ գանձման ընթացակարգում բացակայում է նաեւ միասնական մոտեցումը. մի դեպքում կնքվում են ջրամատակարարման պայմանագրեր, մեկ այլ դեպքում պարզապես կազմվում են ջրօգտագործողների ցուցակներ, կամ՝ վարձավճարները գանձվում են համայնքների ղեկավարների, որոշ դեպքերում էլ միջնորդ կազմակերպությունների, այսպես կոչված ջուր սպառող կոոպերատիվների (ՋՍԿ) կողմից: Սրան հավելենք, որ որոշ պոմպակայաններում բացակայում են նաեւ հաշվիչները, ինչի պատճառով հնարավոր չի լինում պարզել, թե ծախսված էլեկտրաէներգիան օգտագործվել է միայն ջուր մատակարարելո՞ւ, թե՞ նաեւ այլ նպատակով, իսկ տեղադրվածներն էլ, որպես կանոն, սերտիֆիկացված չեն. սա հակասում է չափումների միասնականության ապահովման մասին օրենքի պահանջներին:

Նշված բացթողումները վերացնելու ուղղությամբ Գագիկ Մարտիրոսյանը խոստացել էր միջոցներ ձեռնարկել, սակայն, ըստ մեր ունեցած տեղեկությունների, անցած 5 ամիսների ընթացքում սայլը տեղից չի շարժվել, եւ խոստումները գործի չեն վերածվել: Հենց դա է հիմք տալիս ենթադրելու, որ իրականում նրան այնքան էլ չեն հուզում (գուցե նաեւ ձեռնտու է) այսօրինակ բարձիթողի վիճակը, ահռելի մեծ չափերի հասնող պարտքերի գոյացման պատճառները: Ճիշտ է, 2001 թ. սեպտեմբերի 1-ից մինչեւ 2002 թ. հունվարի 10-ը ընկած ժամանակահատվածում որոշ գումարներ վերականգնվել են. օրինակ, միայն Արմավիրի մարզի դատախազության կողմից հարուցվել է 11 քրեական գործ ոռոգման եւ խմելու ջրի մատակարարման նպատակով ծախսված էլեկտրաէներգիայի վարձավճարների գանձման ոլորտում արձանագրված չարաշահումների փաստերի առթիվ, օրենքի խախտման անթույլատրելիության մասին նախազգուշացվել են 64 պաշտոնատար անձինք ու քաղաքացիներ, որի արդյունքում արտաղատական կարգով վերականգնվել է 90 մլն 115 հազար դրամ էլեկտրաէներգիայի, 552 մլն 376 հազար՝ ոռոգման, 14 մլն 630 հազար դրամ՝ խմելու ջրի վարձավճար: Արարատի մարզի դատախազության կողմից բվով 29-ը պաշտոնատար անձանց նախազգուշացնելու արդյունքում վերականգնվել է շուրջ 45 մլն դրամ էլեկտրաէներգիայի, 397 մլն 84 հազար ոռոգման, 164 մլն 726 100 դրամ՝ խմելու ջրի վարձավճար: Իսկ ընդհանուր առմամբ, հունվարի 10-ի դրությամբ, վերականգնվել 542 մլն 803 050 դրամ էլեկտրաէներգիայի, 1 մլրդ 310 մլն 365 դրամ՝ ոռոգման, 809 մլն 161 100 դրամ՝ խմելու ջրի վարձավճար: Սակայն սա մի կաթիլ է ծովում, քանզի, 2002 թ. մարտի 5-ի դրությամբ, միայն Երեւան քաղաքում էլեկտրաէներգիայի վարձավճարի պարտքի մնացորդը կազմում է 1 մլրդ 784 մլն 364 հազար դրամ, խմելու ջրինը 8 մլրդ 589 մլն 969 996 դրամ, ոռոգման ջրինը՝ 22 մլն 612 հազար դրամ: Այսպիսի խոշոր պարտքեր կան նաեւ Արմավիրի, Արարատի, Կոտայքի եւ Գեղարքունիքի մարզերում:

Ոչ ոք չի կարող երաշխավորել, որ այս գումարները այլեւս օգտագործված կամ թաքցված չեն լինի, եւ կհաջողվի վերականգնել: Հետեւապես, շատ կարեւոր է նոր պարտքերի գոյացման բացառումը: Ասել է թե՝ օրվա հրամայականն է սերտիֆիկացված հաշվիչների տեղադրումը եւ վարձավճարների գանձման մեխանիզմների հստակեցումը, առավել եւս, երբ սկսվում է գյուղատնտեսական աշխատանքների եռուն շրջանը, եւ ոչ ոք չի կարող բացառել, որ ոռոգման ջուր մատակարարելու քողի ներքո էլեկտրաէներգիան չեն սպառի, ասենք, տնտեսվարող սուբյեկտները, կամ, առանց ջուր մատակարարելու, գյուղացուն չեն պարտադրի վճարել վարձավճարը՝ հետագայում յուրացնելով այն...

«Պրոմեթեւս-Քիմպրոմը» կվերագործարկվի ամենաուշը երկու ամսվա ընթացքում

Նախատեսվում է, որ մոտ օրերս Վանաձորի «Պրոմեթեւս-Քիմպրոմ» ընկերությունը պայմանավորվածություն ձեռք կբերի Ռուսաստանից ընկերությանը մատակարարվող գազի գնի նվազեցման վերաբերյալ: Ըստ ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարար Կարեն Ճշմարիտյանի, պայմանավորվածությանը որպես կողմ ներգրավվելու են ՀՀ կառավարությունը եւ «Հայռուսգազարդ» ընկերությունը: Հնարավոր է, որ գազի գնի նվազեցման պայմանավորվածության հիմքում դրվելիք սխեման ներառի արտադրանքի արտահանման ժամանակ գանձվող ավելացված արժեքի նվազեցման, «Պրոմեթեւս-Քիմպրոմի» հանդեպ «Հայռուսգազարդի» բաժնետեր ռուսական «Գազպրոմ» ընկերության պարտքի մարման դրույթները:

Նախարարի գնահատմամբ, «Պրոմեթեւս-Քիմպրոմը» կվերագործարկվի ամենաուշը երկու ամսվա, իսկ առաջին արտադրանքը կտա վեց ամսվա ընթացքում:

Կավելանա ադամանդագործության ծավալը

Ըստ ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության, Հնդկական Rose Blue ընկերությունը Թալինի ադամանդագործական «Դայմոթեք» ձեռնարկության աշխատողների թիվը մինչեւ տարեվերջ կհասցնի 1000-1500-ի: Ըստ վարչության պետի, ներկայումս այնտեղ աշխատում է 300 մարդ, եւ «Դայմոթեքի» ղեկավարությունն իր ծրագրերն իրականացնելու նպատակով յուրաքանչյուր 10 օրը մեկ մոտ 50 աշակերտ է ընդունում Թալին քաղաքից եւ շրջակա գյուղերից:

«Դայմոթեքի» ծրագրերի իրականացման նպաստավոր պայմաններ կստեղծի նաեւ ձեռնարկության Հայաստանին ռուսական բնական ալմաստների մատակարարման մասնաբաժնի շահառու լինելու հանգամանքը: Հնդկական ընկերությունը ձեռնարկության աշխատանքն ապահովելու է նաեւ Հարավաֆրիկյան Հանրապետությունից եւ Բելգիայից ներմուծվող հումքով:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

Ելք «արտակարգ» թնջուկից

Այսօր մեր համաքաղաքացիների գերակշիռ մասը միակարծիք է այն հարցում, որ այլեւս հանդուրժել չի կարելի հանրապետության եւ մասնավորապես՝ Երեւան քաղաքի գերեզմանատներում կիրառվող, քիչ է ասել՝ անմիտաբար վիճակը: Եվ այստեղ խնդիրը սոսկ սոցիալական չէ: Հատկապես Երեւանի պարագայում ակնհայտ են քաղաքաշինական, սանիտարական եւ բնապահպանական նորմերի կոպիտ խախտման դեպքեր, որոնց պատճառով արդեն քաղաքը հայտնվել է գերեզմանատներով «շրջափակված» վիճակում:

Որն է ելքը: Այս հարցին բոլորովին վերջերս փորձեց գործնական լուծում տալ ՀՀ կառավարությունը հաստատելով քաղաքաշինության նախարարության հեղինակած «Հուղարկավորության կազմակերպման մասին» օրենքի նախագիծը: Նշենք, որ մինչ օրս այս ոլորտը կանոնակարգվել է կառավարության միջանկյալ որոշումներով, որոնք, ինչպես ցույց է տալիս անցած տարիների փորձը, ի զորու չեղան հստակեցնելու իրավահարաբերությունները եւ կարգավորման հիմքերը: Այս ոլորտում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Երեւան քաղաքի տարածքում տեղակայված 18 գերեզմանատներից միայն 8-ն ունեն հողահատկացման հատակագծեր: Ու չնայած նշված գերեզմանատներից միայն չորսն են այսօր պաշտոնապես գործում, այդուհանդերձ, մնացածների «ընդարձակումը» շարունակվում է կայուն, ահագնացող տեմպերով: Արձանագրելով այդ մասին ՀՀ վարչապետի վերահսկողական ծառայությունը 2000 թվականին իր կատարած դիտարկումների արդյունքում նշել է, որ գլխավոր հատակագիծ եւ բարեկարգման նախագիծ ունեն սոսկ Արին Բերդ (Սովետաշեն) եւ Շահումյան-2 գերեզմանատները: Հետեւապես, մնացածների ընդարձակումը կատարվել եւ կատարվում է ապօրինի քաղաքաշինական, սանիտարական եւ բնապահպանական նորմերի կոպիտ խախտումներով: Ավելին, պարզվում է նույնիսկ ՀՀ կառավարության համապատասխան միջանկյալ որոշումների առկայության դեպքում գերեզմանոցների նոր սահմանները չեն արտացոլվել բարեկարգման նախագծերում: Իսկ այս հանգամանքը, բնականաբար, «կանաչ լույս» է ապահովել գերեզմանատների սահմանների հետագա խախտման եւ դրանց ղեկավարների կամայականությունների համար: Շատ հաճախ գերեզմանատների ընդարձակումը կատարվել է գյուղատնտեսական եւ պատմամշակութային նշանակության հողատարածքների հաշվին: Մոտավոր գնահատականներով, սույն «ինտերվենցիան» ընդգրկել է հավելյալ 40-50 հա տարածք: Եվ որ պակաս մտահոգիչ չէ, ամենաթողության հետեւանքով հազարավոր հուղարկավորություններ են կատարվել բարձր լարման էլեկտրահաղորդալարերի անվտանգության գոտիներում, ջրամբարների անմիջական հարեւանությամբ, խմելու ջրի եւ կոյուղու ջրագծերի վրա: Այսօր սահմռկեցնող վիճակ է Սովետաշենի գերեզմանոցում, որը երկրաբանական պրոցեսների հետեւանքով (ստորգետնյա ջրեր, սողանքներ) մեծ վտանգ է ներկայացնում սանիտարահիգիենիկ անվտանգության տեսանկյունից:

«Հուղարկավորության կազմակերպման մասին» օրենքի էությունը բխում է այս ոլորտում առկա բավական բարդ, խճողված իրավիճակից: Այն, ըստ էության, առաջին քայլն է հուղարկավորության հետ կապված իրավահարաբերությունների եւ ոլորտում պետական կարգավորման օրենսդրական հիմքերի հաստատման ուղղությամբ: Մասնավորապես, օրենքով նախատեսվում է համապատասխան նորմատիվ ակտերի ընդունման գործընթաց կարգավորման ենթակա բոլոր ուղղություններով: Ակնկալվում է պետության մասնակցությունը գերեզմանոցների զբաղեցրած հողերի իրավական հատուկ ռեժիմի եւ օգտագործման հանդեպ սահմանափակումների սահմանման, նաեւ հողատեսքերի օգտագործման սխեմաների հաստատման հարցերում: Ինչ վերաբերում է մատուցվող պարտադիր ծառայությունների սակագներին, ապա դրանք սահմանվելու են ՀՀ կառավարության կողմից: Ընդ որում, նախագծով առաջարկվել է հուղարկավորության կազմակերպումը (գերեզմանների հաշվառում, պահպանում, շահագործում) իրականացնել համայնքի ղեկավարի կողմից ստեղծված համայնքային ոչ առեւտրային կազմակերպության միջոցով, ինչը թերեւս միտված է ֆինանսատնտեսական հարաբերությունների առավելագույնս պարզեցմանը:

Տիգրան ՍԻՄՈՆՅԱՆ

Ում կհասնի 8,5 մլն դոլարը

Անդրանիկ
ԲԱՂՐԱՄՅԱՆ

Ըստ որոշ տվյալների, պաշտոնական շրջանակները, ըստ երեւույթին, ձգտում են մրցույթի այնպիսի պայմաններ դնել, որպեսզի խաղից դուրս մնան արտասահմանյան հայտնի ընկերություններն, ու ամբողջ գումարը հատկացվի տեղական արտադրողներից մեկին՝ «Էներգահինվեստ» կոնցեռնին, որը մրցույթում հանդես է գալիս ճապոնական մի ընկերության հետ համատեղ:

էջ 1

Բազմասակագնային հաշվիչների նախապատմությունը

Այսպես կոչված երկսակագնային էլեկտրոնային հաշվիչներով էլեկտրաէներգիայի մանրածախ ցանցը հագեցնելու ծրագիրը կարծես թե տեղից չի շարժվում, թեեւ այդ նպատակով դեռեւս 1999 թ. այն ժամանակվա կառավարությունը համապատասխան որոշում էր կայացրել:

Իսկ որոշման առիթը Ճապոնիայի կառավարության եւ Համաշխարհային բանկի օժանդակությամբ իրականացվող ՀՀ էներգահամակարգի վերականգնման 66 միլիոն դոլար ընդհանուր արժողության վարկային ծրագրի շրջանակներում հատկացված 8,5 մլն դոլարի նպատակային օգտագործումն էր: Ըստ Ճապոնիայի կառավարության հետ կնքված վարկային համաձայնագրի, այդ գումարներով կառավարությունը պետք է ապահովեր 150 հազար սոցիալապես անապահով ընտանիքների ապահովումը բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչներով: Այդպիսով, պետությունն իր վրա է վերցրել միայն սոցիալապես անապահով խավերի ինդուկցիոն հաշվիչների փոխարինման հոգսը, իսկ մյուսները, եթե ուզում են բարձր ճշգրտության հաշվիչ ունենալ, պետք է վճարեն:

Բայց ինչ-որ չի երեւում ցանկալի էնտուզիազմ թե սոցիալապես անապահովների՝ եւ թե համեմատաբար ապահովվածների շրջանում: Ինչո՞ւ:

Պատասխանը պարզ է՝ վճարունակ սպառողների համար տեսուչի հետ գործարքի մեջ մտնելով՝ հաշվիչի գլխին «խաղեր խաղալը», համատեղ էներգիա գողանալն ու, ի վերջո, ավելի քիչ վճարելն ավելի ձեռնտու է: Ինչ վերաբերում է սոցիալապես անապահովներին, ապա, մասնագետների վկայությամբ, գիշերային ժամերին ավելի էժան էլեկտրաէներգիա սպառելու նրանց ցանկությունը մեծ չէ. երկսակագնային հաշվիչներից ավելի շուտ օգտվում են միջին խավի փոքրաքանակ բաժանորդները, այն էլ հիմնականում ձմռան, սեզոնին՝ ջեռուցման նպատակով: Սակայն նրանց թիվը եւս մեծ չէ. որոշ տվյալներով՝ 4000-5000 բաժանորդ: Իսկ ընդհանուր առմամբ, երկսակագնային հաշվիչներից ներկայումս օգտվում է 8000-10000 բաժանորդ:

Մի խոսքով, երկսակագնային համակարգն իրեն չի արդարացնում, բայց արի ու տես՝ կառավարությունը որոշել է բաժանորդներին զանգվածաբար հրամցնել, ոչ ավելի, ոչ պակաս, ... վեցսակագնային հաշվիչներ: Այդ նպատակով արտադրողներին մրցույթի առաջարկ է արվել. գործընթացը նախարարակավորման փուլում է, իսկ բուն մրցույթը, ՀՀ էներգետիկայի նախարար Արմեն Մովսիսյանի հավաստմամբ, երկուսից երեք ամիս կտեւի: Ամբողջ խնդիրը ճապոնական վարկը «շահեկանորեն» տնօրինելն է: Ըստ որոշ տվյալների, պաշտոնական շրջանակները, ըստ երեւույթին, ձգտում են մրցույթի այնպիսի պայմաններ դնել, որպեսզի խաղից դուրս մնան արտասահմանյան հայտնի ընկերություններն, ու ամբողջ գումարը հատկացվի տեղական արտադրողներից մեկին՝ «Էներգահինվեստ» կոնցեռնին, որը մրցույթում հանդես է գալիս ճապոնական մի ընկերության հետ համատեղ: Հիմնավորումը ավելի քան հասկանալի է. պետք է պաշտպանել հայրենական արտադրողի շահերը: Ճապոնական կողմին եւս կարելի է հասկանալ. իր վարկավորմամբ ու դրան «կցված» պահանջով նա նորանոր շուկաներ է բացում իր ազգային ընկերությունների համար: Գործին տեղյակ, նրանում շահագրգիռ պատգամավորներին ու նրանց «կապակցված» անձանց էլ կարելի է հասկանալ՝ անձնական շահի խնդիր կա: Իսկ թե ո՞վ պետք է պաշտպանի հայրենական սպառողի, ասել է թե՝ ընտրողի շահերը... Դա, իհարկե, պատգամավորի կամ պաշտոնյայի համար երկրորդական խնդիր է: Իսկ ի՞նչ են մտածում գործին տեղյակ մարդիկ:

Մասնագետի կարծիքը

Ըստ խնդրո առարկա հարցին տեղյակ մասնագետներից մեկի դիտարկման, բազմասակագնային հաշվիչների ներդրումն, ընդհանրապես, կայացած շուկայական տնտեսություններին բնորոշ երեւույթ է. նման համակարգերում սկզբունքորեն հնարավոր է 24-սակագնային հաշվիչների կիրառություն: Երկսակագնային հաշվիչների կիրառումն այն նվազագույնն է, որը թույլ է տալիս լուծել էներգետիկ ծանրաբեռնվածության օպտիմալացման ու բեռի՝ հնարավորինս հավասարաչափ բաշխման խնդիրը: Այսպես կոչված, «պիկ ժամերի» համար պետությունների սակագնային քաղաքականություն իրականացնող կառույցները սահմանում են ավելի բարձր սակագներ, ինչը նվազեցնում է այդ ժամերին էլեկտրաէներգիայի ծախսը, որի արդյունքում նվազում է ծանրաբեռնվածությունը ընդհանուր ցանցերի վրա:

Ներկայումս Հայաստանում արտադրվող ու սպառողներին հրամցվող երկսակագնային էլեկտրոնային հաշվիչը սպառողի վրա «նստում է» 52 դոլար, որի արժեքը էլեկտրացանցը խոստանում է վերադարձնել մեկ տարի անց՝ սպառվող էլեկտրաէներգիայի հաշվին: Այլ կերպ՝ սպառողը այդ գումարներով վարկավորում է արտադրողին, որպեսզի նա շարունակի հաշվիչներ արտադրել: Սակայն նշված գինը որքանո՞վ է ընդունելի սպառողի համար:

Մինչ այժմ արտադրված ու տեղադրված էլեկտրոնային հաշվիչների թիվը (ընդհանուր բաժանորդների թվի ընդամենը 1 %-ը) ցույց է տալիս, որ մարդիկ գերակշիռ մասով չեն ընդունում նման պայմանը, թեեւ նրանցից շատերը կցանկանային այլ՝ հավասար պայմաններում տեղադրել այդ հաշվիչները, քանի որ առանց նշված պայմանի՝ դա ձեռնտու է: Մյուս կողմից, մասնագետների հաշվարկներով, բազմասակագնային էլեկտրահաշվիչի յուրաքանչյուր սակագնային նիշի ավելացումը հաշվիչի գինն ավելացնում է 1-2 դոլարով:

Արտասահմանյան հայտնի ընկերությունների կողմից հայաստանյան արտադրության նույնանման երկսակագնային հաշվիչների գինը 30-35 դոլար է, եւ եթե հայաստանյան սպառողին ընտրելու հնարավորություն տրվի, ապա վերջինս անկասկած կնախընտրի արտասահմանյան էժան ու ավելի որակյալ սարքը: Սակայն՝ եթե այդ հնարավորությունը տրվի:

Դատելով ճապոնական վարկի միջոցներով բազմասակագնային հաշվիչների արտադրության մրցույթի նախապատրաստման փուլում առկա իրողություններից ու կուլիսների հետեւում ընթացող «ծածկադմփոցից», նման հնարավորություն սպառողը դժվար թե ստանա:

ՆԻՍՏ

«Լիզինգային» միջանցք՝ ներդրումային դաշտում

Ֆինանսավարկային համակարգի սույն արդիական գործիքը մինչ օրս աննշան դերակատարություն է ունեցել Հայաստանի ներդրումային դաշտում: Այդուհանդերձ, որոշ հիմքեր կան կարծելու, որ մոտ ժամանակներս Հայաստանում կարող է գրանցվել լիզինգային ներդրումների զգալի աճ:

Երեկ ՀՀ կառավարությունում հավանություն է տրվել ֆինանսական վարձակալության (լիզինգի) համակարգի զարգացմանը միտված օրենսդրական նախաձեռնությունների փաթեթին, որը, ՀՀ արդարադատության փոխնախարար Գեւորգ Մալխասյանի բնութագրմամբ, «նպատակ ունի երաշխիքներ ապահովել նաեւ գործունեությամբ շահագրգիռ օտարերկրյա ներդրողներին»: Հարկ է նշել, որ սույն նախաձեռնությունը եղել է հենց վերջիններիս կողմից: Հայաստանի օրենսդրությանը ծանոթանալուց հետո, ըստ պրն Մալխասյանի, հայ գործադիրին ներկայացվել են որոշ օրենքներում փոփոխություն կատարելու առաջարկներ: Մասնավորապես ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կատարվելիք մի փոփոխության շնորհիվ լիզինգ տրամադրողը (իմա բանկը) ձերբազատվելու է իր վարձակալության տրված գույքի վնասների եւ թերությունների համար պատասխանատվությունից: Բանկը պետք է երաշխավորված լինի իր տրամադրած գույքի ապահովության համար, եւ, բացի դրանից, եթե վարձակալը թերանա իր պայմանագրային պարտավորությունները կատարելու հարցում, այն հնարավորություն կունենա դատական կարգով կանխել իր տրամադրած գույքի հետագա շահագործումը:

Արդարադատության փոխնախարարը կարեւոր հանգամանք համարեց միջազգային ճանաչում ունեցող ընկերությունների հետաքրքրությունը Հայաստանի ներդրումային դաշտի այս ոլորտի նկատմամբ: Մանավանդ որ նրանք մտադիր չեն սահմանափակվել սոսկ լիզինգային վարկավորմամբ: Նշված օրենսդրական փաթեթի եւ «Վարկային կազմակերպությունների մասին» օրենքի ԱԺ-ում բարեհաջող ընդունումը կարող է նաեւ խրախուսել լիզինգային գրասենյակների բացումը Հայաստանում:

Ուշացած, բայց անհատույց

Հայ գործադիրը հերթական նիստում կայացրել է որոշում, որով հող ստանալու իրավունք է վերապահվել նաեւ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով անհատույց սեփականաշնորհումից չօգտված քաղաքացիներին: Երեկ, տեղեկացնելով այդ մասին, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ Մանուկ Վարդանյանը պարզաբանեց, որ դրանով ապահովվել է զինծառայողների ընտանիքների սոցապահովության մասին օրենքի 34-րդ հոդվածի կատարումը, որով անհատույց հող ստանալու իրավունք կունենան ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողների բնակարանային բարելավման կարիք ունեցող ընտանիքները:

Տեղին է հիշեցնել, որ փետրվար ամսին

ՀՀ Հողային օրենսգրքում կատարված մեկ այլ փոփոխությամբ նման իրավունք էին ստացել նաեւ բռնադատվածներն ու նրանց օրինական ժառանգորդները: Իսկ կառավարության 2001 թ. թիվ 47 որոշման համաձայն, 80 համայնքներում հողերի նպատակային նշանակությունը փոխելուց հետո սկսվել է 1042 հա գյուղատնտեսական եւ 550 հա տնամերձ հողերի անհատույց սեփականաշնորհման սկզբունքով տրամադրման գործընթացը:

Սեփ. լր.

Մթի ու ցրտի զոհերը

Մարդկանց շատ հիվանդություններ սկսվում են դեռեւս մանկության տարիներին եւ երբեմն անդառնալի հետք թողնում առողջության վրա, ծանր հետեւանքների տեղիք տալիս: Արդյունաղթի, սոցիալական դժվար կացության պայմաններում, երբ սովորաբար բժշկի են դիմում մահամերձ վիճակում միայն, դժվար է ճշգրիտ թվեր նշել մեր հանրապետությունում դեռահասների հիվանդությունների վերաբերյալ, սակայն առանց վիճակագրական տվյալների էլ մասնագետները փաստում են, որ աճող սերնդի մոտ բազմաթիվ են հիվանդությունների սրված եւ վտանգավոր դեպքերը:

Նաիրա ՊՈՂՈՍՅԱՆ

Ընտանիքի պլանավորման եւ առողջության կենտրոնի (նախկին երկրորդ ծննդատուն) մանկական գինեկոլոգիայի բաժնի վարիչ Ռաֆիադա Սարգսյանը հայտնում է, որ դեռահասների շրջանում այժմ հանդիպում են այնպիսի ֆունկցիոնալ խանգարումներ եւ տարօրինակ հիվանդություններ, որոնց հետ բազմամյա աշխատանքային փորձ ունեցող բժիշկները երբեւէ չեն առնչվել: Շատ երեխաներ ծնվում են արդեն մահացած կամ ի ծնե հիվանդություններով, ոչ նորմալ ֆիզիկական կառուցվածքով: Մանկական գինեկոլոգիայի օգնությանը դիմողների մեջ մեծացել է փոքր տարիքի երեխաներ ունեցողների թիվը. դժբախտաբար, երբեմն նույնիսկ մեկ-երկու տարեկան երեխան ապահովագրված չէ չարորակ գոյացություններից:

Որո՞նք են պատճառները: Տիկին Սարգսյանը մատնանշում է անցած ցուրտ ու խավար տարիները, էներգոտեռորն ու սովը շեշտելով, որ էնդոկրին հիվանդություններով տառապում են հիմնականում այն դեռահասները, ովքեր ծնվել են այդ ժամանակահատվածում:

Ինչպես ներկայացրեց մանկական բժիշկ-գինեկոլոգ Ժորժետա Մկրտչյանը, ստրեսային իրավիճակները, ծանր կենցաղային պայմանները, ուժեղ հոգեկան ապրումները առաջացնում են անչափահասների սեռական գեղձերի ֆունկցիաների փոփոխություն, ինչը շատ լուրջ խանգարումներ է առաջ բերում, եւ հետեւանքները նույնիսկ հասուն տարիքում դժվար է լինում վերացնել: Առաջանում է վաղաժամ հասունացում, կրծքագեղձերի, սեռական հասունացման բացակայություն, չբերության ռիսկ եւ այլն:

Բժիշկների հավաստիացմամբ, համեմատաբար ավելացել են երեխաների կենտրոնական նյարդային համակարգի հետ կապված խանգարումները, իսկ առաջին հայացքից անվտանգ թվացող գրիպ, անգինա հիվանդությունները հասունացման շրջանում հաճախակի կրկնվելու պարագայում հանգեցնում են ծանր հետեւանքներով բորբոքումների:

Ո՞րն է ելքը անմխիթար այս իրավիճակից. չէ՞ որ այսօրվա աճող սերնդով է պայմանավորված ազգի ապագան: Տիկին Սարգսյանը հայտնում է, որ հարյուրավոր երեխաներ ծնողների անվճարունակության պատճառով չեն կարողանում համապատասխան բուժում ստանալ: Իսկ անհրաժեշտ բուժօգնություն, հատկապես հիմա, երբ մի քանի մանկական գինեկոլոգիական բաժանմունքներ են գործում, հնարավոր է ստանալ: Բացի այդ, ըստ բժշկուհու, երեխային հարկ է անմիջապես ներկայացնել համապատասխան մասնագետին, ոչ թե այլ բժշկի մոտ բուժման մի քանի սխալ կուրս ընդունելուց հետո: Տիկին Սարգսյանի համոզմամբ, ամենահիմնական խնդիրը սոցիալական ծանր վիճակն է, որը կործանարար ազդեցություն է թողնում ամենքի, առավելապես երեխաների առողջության վրա:

Մի՛ խուսափեք պատվաստումներից

«Տուբերկուլոզը համարվում է սոցիալական հիվանդություն: Այս հիվանդությունը հաճախադեպ է այն երկրներում, որտեղ բնակչության կենսամակարդակը ցածր է: Տուբերկուլոզով հիվանդների թիվը մեծ է կալանավայրերում, սոցիալապես խիստ անապահով ընտանիքներում, թմրամոլների շրջանում եւ այլն:

Շուտով նոր, եռավալենտ վակցինա կկիրառվի Հայաստանում կարմրուկի, կարմրախտի եւ խոզուկի դեմ միանգամից:

Դակահիգենիկ պայմաններում, թերսնման հետեւանքով ավիտամինոզ է առաջանում նպաստելով իմունային համակարգի անկմանը, եւ օրգանիզմը չի կարողանում ինքնուրույն պայքարել հիվանդության դեմ»,- ասաց առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման կենտրոնի փոխտնօրեն, իմունիզացիայի ազգային ծրագրի ղեկավար Սիրակ Սուքիասյանը: Նա հաստատեց, որ մեր հանրապետությունում տուբերկուլոզի տարածման միտում է նկատվում, որի դեմ պատվաստման միջոցով ակտիվ պայքար է մղվում նպատակ ունենալով նախ դադարեցնել հիվանդության աճը, հետո նվազեցնել: Սակայն միայն դեղամիջոցները բավարար չեն, նշանակություն ունի նաեւ սնունդը:

Մեկ այլ վարակիչ հիվանդության էպիդեմիկ պարոդիտի (խոզուկ) դեպքեր են գրանցվել Գյումրիի թիվ 8 դպրոցում, եւ հիվանդացած 14 երեխաներից 13-ը պատվաստված են եղել դրա դեմ: Սա այն դեպքում, երբ խոզուկի դեմ պատվաստված երեխաները 99,9 տոկոսով այլեւս չպիտի հիվանդանան դրանով: Սակայն, ինչպես պարզաբանեց պարոն Սուքիասյանը, խոսքն այս պարագայում վերաբերում է պատվաստանյութի եւ օրգանիզմի փոխհարաբերությանը, երբ միշտ չէ, որ համապատասխան իմունային համակարգ է ձեւավորվում, առավել եւս, երբ հիշյալ երեխաները պատվաստումներ ստացել են անմիջապես հետերկրշարժյան ոչ այնքան վերահսկելի ժամանակաշրջանում:

Պարոն Սուքիասյանը պնդում է, որ իրավիճակը վերահսկելի է, եւ խուճապի մատնվելու կարիք չկա: Նրա կարծիքով դպրոցականները կարող են ունենալ առավել վտանգավոր, ոչ միայն վարակիչ հիվանդություններ 10-12C ջերմաստիճանով դասարաններում պարապմունքներ անցկացնելով, ինչը նույնպես սոցիալական երեւույթ է:

Իմունիզացիայի ազգային ծրագրի ղեկավարը հայտնեց, որ շուտով նոր, եռավալենտ վակցինա կկիրառվի Հայաստանում կարմրուկի, կարմրախտի եւ խոզուկի դեմ միանգամից: Հարկ է նաեւ նշել, որ մեզանում վերացել է պոլիոմելիտ հիվանդությունը (վերջին դեպքը գրանցվել է յոթ տարի առաջ): Պոլիոմելիտի սուր վարակ է հայտնաբերվել Վրաստանում, որի պատճառով այժմ Վրաստանին սահմանակից հայկական տարածքներում պատվաստումներ են կատարվում:

Օգտվելով առիթից պարոն Սուքիասյանը հիշեցրեց, որ պատվաստումները կատարվում են անվճար, եւ դրանց համար գումար պահանջելը ապօրինի է: Նա նաեւ կոչ արեց չխուսափել պատվաստումներից, քանի որ հիվանդանալու ռիսկը ավելի մեծ է չպատվաստվածների շրջանում, եւ անգամ հիվանդանալու դեպքում էլ վարակիչ հիվանդությունների դեմ անհրաժեշտ իմունային պաշտպանվածություն ունեցողը ավելի հեշտ է դիմադրում եւ թեթեւ է տանում այն:

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ



Փափուկ բա՞ռ բժիշկներին

Թիվ 14 պոլիկլինիկայի շուրջ 80 թերապեւտներն այս շաբաթ դադարեցրին հայտարարած անժամկետ գործադուլը, որն սկսել էին մարտի 6-ից 17 ամսվա աշխատավարձ չստանալու պատճառով: Ըստ բուժաշխատողների իրենց խնդրին ցուցաբերվում է համակարգված մոտեցում, եւ քաղաքապետարանի ու առողջապահության գործակալության ներկայացուցիչները խոստացել են 15 օրվա ընթացքում կարգավորել աշխատավարձի բաշխման հարցը, նույնիսկ բարձրացնել վճարման չափը:

Այն հարցին, թե ինչպե՞ս կվարվեն, եթե խոստացած ժամկետը լրանալուց հետո իրենց պահանջները չբավարարվեն, բժիշկները պատասխանեցին, որ այդ ժամանակ միայն կորոշեն իրենց անելիքը, համենայնդեպս, չեն դադարի իրենց իրավունքների համար պայքարելուց:

«Մենք հավատում ենք նախագահին եւ հուսով ենք, որ առաջիկայում արմատական բարեփոխումներ կլինեն առողջապահության համակարգում: Այդ նկատառումով էլ դադարեցնում ենք գործադուլը եւ անցնում աշխատանքի»,- հայտարարեցին թիվ 14 պոլիկլինիկայի թերապեւտները:

Դե ինչ, խոստումներ տալու եւ հավատացնելու փառապանծ ծիրք ունեն մեր իշխանությունները: Ավելին, այս պարագայում դա արվեց ճիշտ ժամանակին, քանի որ հիշյալ պոլիկլինիկայի թերապեւտների հաստատակամությունից խանդավառված, տնօրենների սպառնալիքներին հակառակ, նրանց էին պատրաստվում միանալ նույն բախտին արժանացած այլ բուժաշխատողներ: Բողոքի ալիքը թեպետ չլռեցվեց, բայց հանդարտեցվեց, այլապես առողջապահության գործակալությունն ու քաղաքավարչությունը կկանգնեին իրենց համար, մեղմ ասած ոչ այնքան ցանկալի փաստի առջեւ:

Կիրականանա՞ն համապատասխան մարմինների բուժաշխատողներին տված հերթական խոստումները: Բոլոր հավաստիացումները, արդեն նաեւ նախագահի անունից, վերջիններիս կողմից ընդունվում են փոքր-ինչ կասկածով ելնելով դառը փորձից: Ինչեւէ, թե ինչ կլինի հետո, ինչպես նշեցին բժիշկները, պարզ կդառնա շուրջ 15 օր անց:

Սեփ. լր.

Քաղաքական հալածյալի մոֆը փլուզվեց

Էրեբունի եւ Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանում շարունակվում է Մուշեղ Սաղաթելյանի քրեական գործով դատաքննությունը, եւ կարելի է ասել, որ նրան ներկայացված քրեական մեղադրանքները ստանում են իրենց հաստատումը, քանզի դատարան ներկայացած բոլոր փաստաբաններն էլ Սաղաթելյանի ներկայությամբ հաստատեցին նախաքննության փուլում նրա դեմ տված իրենց ցուցմունքները:

Սոնա ՏՐՈՒՋՅԱՆ

Ավելին, իր մեղադրական ցուցմունքները պնդեց նաեւ երեկ հարցաքննված առաջին վկան բացահայտված գործակալ Հարություն Գրիգորյանը, որի հետ, ըստ մեղադրական եզրակացության, Մուշեղ Սաղաթելյանը փորձել է երկրի նախագահ Ռոբերտ Քոչարյանի եւ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի դեմ ակնհայտ կեղծ մատնություն նախապատրաստել, այսինքն վերջիններիս «Հոկտեմբերի 27»-ը կազմակերպելու մեջ մեղադրելու համար կեղծ հիմքեր ստեղծել: Սա երեկ հավաստեց նաեւ գործակալը նշելով, որ գործարքի բարեհաջող ավարտի դեպքում Մուշեղ Սաղաթելյանից ստանալու էր 50 հազար ԱՄՆ դոլար: Իսկ ամեն ինչ սկսվել է այն բանից հետո, երբ «Հոկտեմբերի 27»-ի գործով որոշ մեղադրյալների հետ ինչ-որ ժամանակահատված միեւնույն խցում նստած գործակալ (սետկա) Հարություն Գրիգորյանը, դուրս գալով բանտից, գնացել է «Հանրապետություն» կուսակցության գրասենյակ, հանդիպել Ալբերտ Բազեյանի հետ եւ ասելով, թե իրեն վտանգ է սպառնում ֆինանսական օգնություն խնդրել: Հանդիպման ընթացքում, ըստ Հ. Գրիգորյանի, խոսվել է «Հոկտեմբերի 27»-ի մասին, թե իբր կան Նաիրի Հունանյանին եւ էդիկ Գրիգորյանին դրդրողներ, ինչի առիթով էլ Ալբերտ Բազեյանն ասել է, որ պատասխանատուն երկրի նախագահն է, եթե չի կանխել: Ու առաջարկել է գործակալին գրել իր գիտեցածը, սակայն, ինչպես նշեց Հ.Գրիգորյանը, ինքը ոչինչ չի գրել: «Կազմակերպիչների մասին ռեալ տեղեկություններ չեմ ունեցել ու դրա համար էլ չեմ գրել: Այդ ընթացքում եկավ Մուշեղ Սաղաթելյանը եւ ասաց ծո, ինչ ես անում, հել հըլը: Վերցրեց թուղթը, որտեղ երկու տող գրել էի, պատռեց ու ասաց վաղը

կգնանք առանձին տեղ ու կգրուցենք: 100 դոլար փող տվեց, ու պայմանավորվեցինք, որ հաջորդ օրը զանգահարեմ իրեն»,- երեկ դատարանում պատմեց վկա Գրիգորյանը: Եվ տեղեկացրեց, որ հաջորդ հանդիպումներն արդեն եղել են բացառապես Մուշեղ Սաղաթելյանի հետ: Մասնավորապես, «Ընտանեկան» ռեստորանում տեղի ունեցած հանդիպման ժամանակ, 1-2 բաժակ խմելուց հետո. Մ.Սաղաթելյանը խոստովանել է, որ ինքը միակ մարդն է, որը իբրեւ «Հոկտեմբերի 27»-ի կազմակերպիչներ մատնացույց է անում Ռոբերտ Քոչարյանին եւ Սերժ Սարգսյանին, ապա գերեզման սարքելու համար գործակալին տալով 300 ԱՄՆ դոլար, ասել է, թե գոյություն ունի ինչ-որ ձայնագրություն, որտեղ Ա.Ս. պատգամավոր Մուշեղ Մովսիսյանը խոսում է Վազգեն Սարգսյանի կողմից իրականացվող քաղաքականության դեմ, իսկ Հունանյան եղբայրներն ու էդիկ Գրիգորյանն էլ կառավարության դեմ դուրս գալու մասին: Ավելին, նշել է, թե իբր այդ խոսակցությունը ձայնագրել են Միսակ Մկրտչյանն ու էդիկ Գրիգորյանը, առաջարկելով գործակալին 50 հազար դոլար ձայնագրությունը ձեռք բերելու դեպքում: «Սաղաթելյանն ասաց, թե Մուշեղ Մովսիսյանն ունի նաեւ որոշ գրառումներ, ես ասացի, որ կարող եմ ձեռք բերել ինչի՞ պետք է հրաժարվեի, երբ ինձ 50 հազար դոլար էին առաջարկում»,- վկայեց գործակալը, նշելով, որ այդ նույն հանդիպման ժամանակ Մ. Սաղաթելյանի թելադրանքով գրել է 2-3 էջից բաղկացած հաղորդում այն մասին, թե իբր «Հոկտեմբերի 27»-ի կազմակերպիչները Ռ. Քոչարյանն ու Ս. Սարգսյանն են: Հետագա հանդիպումների ժամանակ, ինչպես նշեց Հ. Գրիգորյանը, Մուշեղ Սաղաթելյանին է տվել Մուշեղ Մովսիսյանի կեղծ օրագիրը, ուր տեղ գտած գրառումները իրականում իր թելադրանքով գրել էր հարեւանի անչափահաս աղջիկը: Ապա զգալով, որ Մ. Սաղաթելյանն իրեն հետեւում է, ինչ-որ կեղծ պատրվակով այցելել է նաեւ էդիկ Գրիգորյանենց բնակարան տպավորություն ստեղծելու համար, թե փորձում է ձեռք բերել նաեւ ձայնագրությունը:

Ըստ վկայի, յուրաքանչյուր հանդիպման ժամանակ ընթացիկ ծախսերի համար Սաղաթելյանից ստացել է որոշակի գումար, ընդհանուր առմամբ 1000-1300 դոլար, ու թերեւս դա է պատճառը, որ շարունակել է նրա հետ հանդիպումները ի հեճուկս ՆԳ փոխնախարարի նախազգուշացման, թե «չխաբնվես որոշ մարդկանց փողերին եւ խոստումներին, ու չդառնաս քաղաքական գործիք, վտանգի տակ ես»: Դժվար է ասել, թե այդ հանդիպումները որքան կշարունակվեին, եւ ուրիշ ինչ կեղծ օրագրեր ու գործակալական հաղորդումներ կծնվեին, եթե էդիկ Գրիգորյանի եղբայրը չգնար ՆԳՆ եւ տեղյակ չպահեր այդ տարօրինակ այցելության մասին:

Ի դեպ, գործակալ Հարություն Գրիգորյանը երեկ հայտարարեց, որ իր օգնությամբ ձեռք բերված այդ կեղծ հիմքերով, եթե դրանց ավելանար նաեւ, այսպես կոչված, ձայնագրությունը, Մուշեղ Սաղաթելյանը մտադիր էր մի քանի պատգամավորների օգնությամբ խորհրդարանում սկսել նախագահի պաշտոնանկության գործընթաց: Մինչդեռ ինքը իր «գործունեության» ընթացքում Ռ. Քոչարյանի կամ Ս. Սարգսյանի մեղսակցության մասին վկայող փաստեր ձեռք չի բերել:

Գործակալի նշյալ վկայությունները այնքան էլ դուր չեկան դահլիճում տեղ գբաղեցրած ամբաստանյալ Սաղաթելյանի երկրպագուներին եւ ընդունվեցին սվիններով, ինչպես նախորդ նիստերի ժամանակ տուժողների տված ցուցմունքները, որոնցով փաստվել էր, որ Սաղաթելյանը անմիջական մասնակցություն է ունեցել «Հայոց Աշխարհ» օրաթերթի գլխավոր խմբագիր Գագիկ Մկրտչյանի, Աժ պատգամավորներ Աղասի Արշակյանի եւ Ֆիլարետ Բերիկյանի, ինչպես նաեւ քաղաքացի Մկրտիչ Մեղավորյանի նկատմամբ 1996 թ. սեպտեմբերի 25-ից հետո կիրառված բռնություններին գործի դնելով նաեւ ռետինե մահակներ: Այդօրինակ բռնություններով, ինչպես նշեց Ֆիլարետ Բերիկյանը, ավարտին է հասցվել 1996 թվականի սեպտեմբերի 22-ին սկսված պետական հեղաշրջումը, եւ ընտրությունների արդյունքում իշխանությունը կորցնելուց հետո բարձրաստիճան պաշտոններ զբաղեցնող անձինք քվեարկության արդյունքները կեղծելու ու մասսայական բռնությունների ճանապարհով շարունակեցին իրենց ձեռքում պահել իշխանությունը:

Նշենք նաեւ, որ տուժածները իրենց հասցված բարոյական վնասի նյութական փոխհատուցման պահանջ չներկայացրեցին «բարոյականության հետ ընդհանրություններ չունեցող» Սաղաթելյանին: Ավելին, Աղասի Արշակյանը պատրաստակամ գտնվեց ընդհանրապես որեւէ բողոք չներկայացնել, եթե Սաղաթելյանը դուրս հանվի ճաղավանդակից, եւ իրեն թույլ տրվի բռունցքով ու ոտքով հարվածել նրան:

Տուժածները իրենց հասցված բարոյական վնասի նյութական փոխհատուցման պահանջ չներկայացրեցին «բարոյականության հետ ընդհանրություններ չունեցող» Սաղաթելյանին: Ավելին, Աղասի Արշակյանը պատրաստակամ գտնվեց ընդհանրապես որեւէ բողոք չներկայացնել, եթե Սաղաթելյանը դուրս հանվի ճաղավանդակից, եւ իրեն թույլ տրվի բռունցքով ու ոտքով հարվածել նրան:

Ջանոյանը՝ խաղից դուրս

Տուժողի իրավահաջորդ Արամ Սարգսյանի շահերի ներկայացուցիչ Օլեգ Յունոշեւը համառորեն շարունակում է «Հոկտեմբերի 27»-ը քաղաքական իարդավանքների համար օգտագործելու նորանոր առիթներ ստեղծելուն միտված իր գործունեությունը: Դրա վառ վկայությունը օրեր առաջ հրավիրված ասուլիսն էր, որի ժամանակ ՀԱՀ-ից առգրավված տեսագրության վերաբերյալ ինչ-որ մասնագետի՝ Ռուսաստանից ուղարկած կարծիքը մանրամասնելու քողի ներքո նա մամուլ նետեց կասկածամտության նոր ալիք:

Մասնավորապես, պրն Յունոշեւը հայտարարեց, թե ազատության մեջ կան «Հոկտեմբերի 27»-ին առնչություն ունեցող ինչ-որ այլ անձինք, սակայն զավեշտալին այն էր, որ այսօրինակ հետեւության մեր հարգարժան փաստաբանը հանգել է ոչ թե քրեական գործի նյութերը լրջագույնս ուսումնասիրելու, ձեռք բերած նոր փաստերը համադրելու արդյունքում, այլ այն պատճառով, որ վերջերս, իբր, Մոսկվայում գտնվող իր կնոջը զանգահարել է ինչ-որ տղամարդ եւ կովկասյան առոգանությամբ ասել այն հեռախոսահամարը, որը հավաքել էր Օլեգ Յունոշեւը «Հանրապետություն» կուսակցության գրասենյակից, եւ ընդամենը: Բայց դա հիմք էր տվել ենթադրելու, թե այդպիսով փորձում են հասկացնել, որ ինքը գտնվում է հսկողության տակ. «Բնական է, որ «Հոկտեմբերի 27»-ի գործով ամբաստանյալները չէին կարող զանգահարել, հետեւապես կան այլ անձինք»,- եզրակացրել է Օլեգ Յունոշեւը: Սակայն առավել հակված եք կարծելու, որ այս դատողության հեղինակը ոչ թե անձամբ փաստաբանն է, այլեւ նրանք, ովքեր 2001 թվականի օգոստոսին փորձեցին ինչ-որ ճնշումների զոհ ներկայացնել Արամ Սարգսյանի շահերի մյուս ներկայացուցիչ Տիգրան Ջանոյանին: Միայն թե այն տարբերությամբ, որ Տիգրան Ջանոյանը այն ժամանակ չներքաշվեց այդ խաղերի մեջ եւ անմիջապես հայտարարեց, որ սպառնալիքներ իր հասցեին, համենայն դեպս իշխանությունների կողմից, չեն հնչել: Եվ եղել են ընդամենը տհաճ խոսակցություններ բոլորովին այլ շրջանակի ներկայացուցիչների հետ, մասնավորապես այն համատեքստում, որ ինքը «լավ մտածի, թե այս գործի տակից ինչպես է դուրս գալու»: Իսկ պրն Յունոշեւը փաստորեն արդարացրեց ակնկալիքները եւ, ի տարբերություն Տիգրան Ջանոյանի, ոչ միայն խոսեց ինչ-ինչ ենթադրյալ ճնշումների մասին, այլ նաեւ դժգոհեց դատավարության ընթացքից: Ու, ոչ ավել, ոչ պակաս, հայտարարեց, թե իր վստահորդ Արամ Սարգսյանի կողմից վարձատրված ինչ-որ մասնագետի տված կարծիքը գործին միայն որպես փաստաթուղթ կցելով դատարանը խոչընդոտում է արդարադատության իրականացմանը: Այսինքն, ըստ նրա, դատարանը ճիշտ չի անում, որ հարգում է օրենքի պահանջը եւ ասում, որ դատավարության մասնակիցներից մեկի կողմից ֆինանսավորված եւ իրեն անհայտ ինչ-որ անձի ստորագրությամբ ներկայացված փաստաթուղթը չի կարող կցել քրեական գործին որպես մասնագետի կարծիք, քանզի այդ անձը չի նշանակվել իր կողմից, ինչպես պահանջում է ՀՀ քր. դատ. օր.-ի 84 հոդվածը, եւ չի նախազգուշացվել ակնհայտ կեղծ տվյալներ տրամադրելու դեպքում նախատեսված պատասխանատվության մասին: Այդպիսով, փաստորեն, պրն Յունոշեւը արդարադատությանը խոչընդոտելու մեջ մեղադրեց նաեւ իր գործընկերոջը Տիգրան Ջանոյանին, քանզի վերջինս եւս դեմ էր արտահայտվել փաստաթուղթը նախապես տված անձին իբրեւ մասնագետ ճանաչելու Յունոշեւի միջնորդությանը:

Տպավորություն է ստեղծվում, որ սա եւս նախապես հաշվարկված էր նպատակ ունենալով հող ստեղծել Տիգրան Ջանոյանի հետ Արամ Սարգսյանի կնքած պայմանագիրը չեղյալ հայտարարելու որոշման կայացման, եւ դա հետագայում տարբեր շահարկումների նպատակով օգտագործելու համար: Իսկ այդօրինակ որոշումը, ամենայն հավանականությամբ, սպասվում է մոտ ապագայում, քանզի ասուլիսին ներկա «Հանրապետություն» կուսակցության քաղաքական խորհրդի անդամ Սուրեն Սուրենյանցը Յունոշեւի վերոնշյալ դարակազմիկ մտքերից հետո հայտարարեց, թե Արամ Սարգսյանը ամենայն ուշադրությամբ հետեւում է դատավարության ընթացքին (առանց հստակեցնելու, թե իր ներկայացուցիչներից որ մեկի տրամադրած տեղեկություններն ու պարզաբանումներն է Ա. Սարգսյանը առավել արժանահավատ համարում) եւ առաջիկայում կքննարկի դատավարական ռեսուրսների արդյունավետության հարցն ու որոշում կկայացնի...

Ս. Տ.

Քննիչները չեն հարցաքննվել

Հարություն Հարությունյանի եւ Նաիրի Բադալյանի նկատմամբ «Հոկտեմբերի 27»-ի գործով նախաքննության ընթացքում կատարված բռնությունների մասին հայտարարությունների առթիվ հարուցված քր. գործի շրջանակներում, ըստ մեր ունեցած տեղեկությունների, քննիչները դեռ չեն հարցաքննվել:

Առայժմ հավելյալ բացատրություններ են տվել Հ. Հարությունյանը եւ Ն. Բադալյանը, հարցաքննվել են նաեւ նրանց նախկին որոշ խցակիցներ, մեկուսարանների աշխատակիցներ: Սակայն, մեր աղբյուրի հավաստմամբ, զինդատախազության որեւէ քննիչ դեռ չի հարցաքննվել, ինչը, ըստ որոշ դիտորդների, նշանակում է, որ դատախազությունը չի գնում բռնությունների մասին հայտարարությունները միտումնավոր հերքելու ճանապարհով:

Սեփ. լր.

29 ՄԱՐՏ- 4 ԱՊՐԻԼ, 2002 #10/1661/

Աղանդավորները չեն շրջանցում նաեւ դպրոցը

Հանրության գլխին պապուհաս դարձած աղանդավորական շարժումները, որոնք անարգել ներթափանցում են մեր հասարակության բարբեր շերտեր, ցավոք, չեն շրջանցում նաեւ դպրոցը: Ավելին, քաջ գիտակցելով, որ երիտասարդ սերնդի շրջանում տարվող աշխատանքը հիմնարար նշանակություն ունի, սրանք քարոզչությունը հնարավորինս փանում են այդ ուղղությամբ:

Լիլիթ ԳԱԼՍՏՅԱՆ

Ելքը ոչ թե ընդդեմ, այլ հանուն պայքարելն է: Այսինքն՝ պետք է լրացնել այն բացը, ինչից էլ օգտվելով՝ աղանդավորական շարժումները հաճախ ներթափանցում ու արմատներ են նետում կրթության համակարգում:

Իսկ այս առումով աղանդավորական շարժումների հնարավորություններն այնքան էլ սահմանափակ չեն: Ճիշտ է, պետականորեն եւ օրենսդրորեն այսօր մեր դպրոցը պաշտպանված է տարատեսակ գաղափարախոսական «արշավներից», քանզի Սահմանադրությամբ մեր երկրում կրթությունը աշխարհիկ է, սակայն դպրոց ներթափանցելու եւ քարոզչություն կատարելու իրական հնարավորությունները նորահայտ «գուրուների» համար քիչ չեն: Խնդիրն այն է, որ որպես աղանդավոր «բացահայտված» ուսուցչի մուտքը դպրոց արգելված չէ. ունենք խղճի ազատության մասին օրենք: Այսինքն՝ աղանդավոր լինելն այս առումով դեռեւս ոչինչ չի նշանակում. նրան հնարավոր է պաստաստանատվության ենթարկել միայն այն դեպքում, եթե դասավանդման ընթացքում քարոզչություն է իրականացնում եւ զբաղվում է հոգեորսությամբ: Իսկ եթե ուսուցիչն աղանդավոր է, մասնավանդ՝ տոտալիտար ինչ-որ աղանդի ներկայացուցիչ, նրա կողմից քարոզչություն կատարելու հավանականությունը չափազանց մեծ է, սակայն նման փաստն ապացուցելն, ինքնին շատ դժվար է, քանի որ, որպես կանոն, աղանդավորները գործում են ոչ բացահայտ, զգուշավոր մեթոդներով:

Աղանդավորության աներեւույթ ներթափանցման այս խնդիրն այսօր արդեն բավական սուր ծառացած է մեր դպրոցներում, բայց դրա մասին ինչպես տնօրենները, այնպես էլ պետական կառույցների ներկայացուցիչները շատ հաճախ բացահայտ չեն խոսում: Մայրաքաղաքի մի քանի դպրոցների տնօրեններ մեզ հետ ոչ պաշտոնական զրույցի ժամանակ միայն հայտնեցին, որ ունեն աղանդավոր, մասնավորապես եհովական ուսուցիչներ: Ավելին, նրանց խոսքով, իրենք որոշ դժվարություններ են ունենում նաեւ եհովականությանը տուրք տված ընտանիքների երեխաների հետ: Տնօրենների, ինչպեսեւ քաղաքապետարանի կրթության վարչության պատասխանատուների խոսքով, քանի որ նրանց դեմ բացահայտ գործելու լծակներ գրեթե չկան, այս ուսուցիչներին կամ մշտապես պահում են հատուկ ուշադրության կենտրոնում, կամ նրանցից ազատվելու հարցը լուծում են անուղղակի ճանապարհով:

ԿԳՆ-ում նույնպես հավաստիացրին, թե առանձնահատուկ ուշադրություն են դարձնում նման ահագանգերին: Այդպիսիք ոչ հաճախ, բայց պատահում են: Ցավոք, կրթական գերատեսչությանը եւս երբեմն չի հաջողվում ստուգման ժամանակ արձանագրել քարոզչության փաստը եւ համապատասխան քայլեր ձեռնարկել: Օրինակ, 2000 թվականին Սպիտակից ստացված երկու ահազանգի հետքերով գնալով նախարարության հատուկ հանձնաժողովները որեւէ կոնկրետ քայլ չեն կարողացել ձեռնարկել: «Իրոք, սա ցավոտ հարց է: Կրոնական տարբեր գաղափարախոսության կրողներ, օգտվելով ուսուցիչների սոցիալական վատ վիճակից եւ դպրոցներում ազգային դաստիարակության առումով առկա բաց դաշտի ընձեռած հնարավորությունից, փորձում են ներթափանցել կրթական հաստատություններ: Նման դեպքերի առթիվ ունեցել ենք մի քանի բողոք, որոնց առնչությամբ նույնիսկ դիմել ենք դատախազություն, եւ հարցին համապատասխան ընթացք է տրվել: Բայց քարոզչության փաստը հաստատելը շատ դժվար է, քանի որ նրանք գործում են զգուշորեն»,- ասաց ԿԳ նախարար Լեւոն Մկրտչյանը: Նրա խոսքով, այս խնդիրը շատ նուրբ է, եւ դրան այսօր բախվում ենք ոչ միայն մենք, այլեւ աշխարհի շատ երկրներ: «Ելքը, կարծում եմ, ոչ թե ընդդեմ, այլ հանուն պայքարելն է: Այսինքն՝ պետք է լրացնել այն բացը, որից օգտվելով՝ աղանդավորական շարժումները հաճախ ներթափանցում ու արմատներ են նետում կրթության համակարգում: Սա պետք է կատարվի դաստիարակության համալիր ծրագրի միջոցով: Եթե ունենանք այդ ծրագիրը, արժեքների այն համալիրը, որի վրա գաղափարապես կամրանա դպրոցը, տարաբնույթ աղանդավորական շարժումների գործունեության համար այլեւս ազատ հող չի մնա: Իհարկե, դաստիարակության հայեցակարգի եւ կուռ համակարգի մշակումն ու ներդրումը դպրոցում ամենեւին չի նշանակում նախկինի պես տոտալիտար գաղափարախոսության դիկտատ, քանզի մեկ դիկտատը մյուսով փոխարինելով՝ որեւէ բան չենք շահի»,- ասաց Լ. Մկրտչյանը: Իսկ դաստիարակության հայեցակարգն արդեն մշակված է, եւ շուտով կմտնի դպրոց: Նախարարը նաեւ տեղեկացրեց, որ Հայ առաքելական եկեղեցու հետ սերտ համագործակցության միջոցով ներկայումս մշակվում են «Կրոնի պատմություն» առարկայի դասավանդման չափորոշիչները: Այս առարկայի դասավանդումը դպրոցներում կբարձրացնի աշակերտների կրոնագիտական իմացությունը, ինչը նույնպես նրանց զերծ կպահի աղանդավորական հոսանքներին տրվելու վտանգից:

ԼՈՒՐԵՐ

Դպրոցական քննական տարբերակը չի փոխվել

Վերջերս համառ լուրեր են շրջում, թե հայոց լեզվի 10-րդ դասարանի ավարտական քննության տեստային աշխատանքում շարադրության տարր պարունակող առաջադրանքը հանվել է: Ինչպես տեղեկացրին ԿԳ նախարարությունում, հայոց լեզվի դպրոցական ավարտական քննության տեստային աշխատանքի առաջադրանքներում որեւէ փոփոխություն չի կատարվել, եւ մասնավորապես շարադրության տարր պարունակող վերջին պահանջը չի հանվել: Սույն պահանջը հանվել է միայն բուհերի ընդունելության քննության հայոց լեզվի քննական տեստերից, ինչն էլ թյուրիմացության պատճառ է դարձել:

Ի դեպ, ԿԳՆ որոշմամբ, օրերս վերջնականապես հստակեցվել է մասնագիտական եւ ոչ մասնագիտական ֆակուլտետների դիմորդների համար հայոց լեզվի քննական տեստերի տարբերակման հարցը: Ըստ այդմ, կառուցվածքային առումով հայոց լեզվի բուհական քննական տեստերն իրարից չեն տարբերվելու, պարզապես այս առարկայի գծով մասնագիտական համարվող ֆակուլտետների դիմորդների տեստային առաջադրանքները բովանդակային առումով ավելի բարդ կլինեն: Իսկ ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դիմորդները, ինչպես ամեն տարի, կգրեն նաեւ ստեղծագործական շարադրություն:

Նոր մասնագիտություններ

Ապագա մասնագիտության ընտրության առումով մայրաքաղաքի բուհերի դիմորդների հնարավորությունն այս տարի եւս ընդլայնվել է: Առաջիկա ընդունելության քննությունների ժամանակ երեք բուհեր ընդունելություն կկատարեն երեք նոր մասնագիտությունների գծով: Մասնավորապես, Երեւանի պետհամալսարանում առաջին անգամ ընդունելություն կկատարվի «Մշակութաբանություն», Խ.Աբովյանի անվան մանկավարժական համալսարանում «Սոցիալական մանկավարժություն», պետական ճարտարագիտական համալսարանում «Կենսատեխնիկական եւ բժշկական սարքեր ու համակարգեր» մասնագիտությունների գծով:

Սեփ. լր.

Ուսանողները՝ խաբեության զո՞հ

Կառավարության շենքի առջեւ երեկ առավոտյան բողոքի ցույց էին կազմակերպել Խ.Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի հասարակական մասնագիտությունների ֆակուլտետի ուսանողները:

Նրանք պահանջում էին իրենց ուսման ժամկետը երկու տարուց դարձնել առնվազն երեք կամ չորս տարի, ինչպես խոստացվել է ընդունելության ժամանակ, բացի այդ ֆակուլտետում կազմակերպել նորմալ դասապրոցես գործնական պարապմունքներով, եւ ի վերջո, ավարտական վկայանի փոխարեն իրենց տալ պետական նմուշի դիպլոմ: «Ասում են, թե մեր ընդունելության ժամանակ տեղի է ունեցել խաբեություն: Ֆակուլտետի նախկին դեկանը մեր ընդունելությունը կատարել է ապօրինի ձեւով, եւ սուտ խոստումներ է տվել: Բայց մենք ի՞նչ մեղք ունենք: Ինստիտուտը մեզ պայմաններ է խոստացել ի դեմս նախկին դեկանի, թող կատարի»,- ասացին ուսանողները:

Խնդիրն այն է, որ համալսարանում ժամանակին, իրոք, լուրջ ապօրինություն է տեղի ունեցել. հասարակական մասնագիտությունների ֆակուլտետի նախկին դեկան Կամո Մկրտչյանը, դիմելով խարդախության, բացառապես լրացուցիչ մասնագիտություններ ուսուցանող իր ֆակուլտետում արդեն որեւէ բուհում կրթություն ստացած ուսանողներ ընդունելուն զուգահեռ, ընդունելություն է կազմակերպել նաեւ դպրոցի շրջանավարտների համար: Ընդ որում, դպրոցի շրջանավարտներն այս ֆակուլտետի երեք լրագրություն, թարգմանիչգիդ եւ մոդելավորող մասնագիտությունների գծով դասընթացներում ընդգրկվել են առանց որեւէ քննության, եւ այն դեպքում, երբ այստեղ երկրորդ մասնագիտություն ստացող ուսանողների ուսման վարձը տարեկան եղել է 25 հազար դրամ, դպրոցի շրջանավարտների ուսման վարձը սահմանվել է 50 հազար դրամ: Սակայն ցուցարար ուսանողները երեկ նաեւ վստահեցնում էին, թե որոշակի գումար էլ վճարել են զուտ ընդունելության համար: Այսպիսով, անօրինական կարգով վերջին տարիներին այս ֆակուլտետ տարեկան ընդունվել է 300-400 ուսանող: Այժմ էլ այստեղ սովորում է ավելի քան 400 ուսանող, որոնցից միայն 6-ն ունեն հիմնական, բուհական կրթություն:

Ինչեւէ, 2000 թվականի վերջին սույն խաբեությունը բացահայտվել է, եւ այստեղ ընդունելությունը դադարեցվել է, իսկ նախկին դեկանի դեմ քրեական գործ է հարուցվել: Ավելին, արդեն ընդունված ուսանողների ավարտելուց հետո ֆակուլտետը որոշվել է փակել: Ինչպե՞ս պետք է վճռվի խաբված ուսանողների ճակատագրի հարցը առայժմ պարզ չէ: Երեկ ԿԳ փոխնախարար Արա Ավետիսյանն ասաց, որ խնդիրը մեկ տարի առաջ նախարարության կոլեգիայում քննվել է, սակայն եթե տրված հանձնարարականները չեն կատարվել, կամ այժմ դարձյալ ինչ-ինչ խնդիրներ են ծագել, իրենք նորից դրանց կանդրադառնան: Այսուհանդերձ, միանշանակ է, որ լրացուցիչ ու երկամյա դասընթացներ անցած ուսանողներին համալսարանը իրավունք չունի ու չի կարող բարձրագույն կրթության պետական նմուշի դիպլոմ տալ:

Լ.Գ.

Հայելին մեզ դե՞մք է թելադրում

Բաղդադի խալիֆը Շահրազադն ուներ՝ հարեմի թիվ մեկ գեղեցկուհին, որն ամեն երեկո հեքիաթի հերթական բաժին էր մատուցում կիրակալին՝ օր առ օր հետաձգելով իր մահապատիժը եւ ապրելով, որ ամենազոր միապետը հետաքրքրությամբ սպասի, թե երբ է սկսվելու հաջորդ երեկոն՝ հեքիաթի բաղձալի շարունակության հետ մեկտեղ: Տեսնես միապետի մտքով անցնո՞ւմ էր, որ այդպիսի պատրազանների «կիրակալ» բառը ցրամաւգծորեն փոխում է իր հասցեն, որովհետեւ չի լինում ավելի կախյալ վիճակ, քան հոգեբանականը, նույնիսկ եթե խոսքը թագակիր ճակատների մասին է:

Դավիթ
ՄՈՒՐԱԴՅԱՆ

Գովազդի նպատակն «էստի համեցեքն» է՝ պարզ. հասկանալի դերակատարություն, բայց ռուսական կամ արեւմտյան հոլովակները շատ անգամ ապացուցում են, որ ցանկացած գովազդ կարող է դառնալ նաեւ մի փոքրիկ գեղարվեստական ստեղծագործություն, այսինքն՝ ճաշակ կրթել, գեղեցիկի ներկայություն ապահովել: Մինչդեռ մեր դեպքում մեծ մասամբ հակառակն է:

Ներ ժամանակների Շահրիպադեն հեռուստադիտողն է: Նրա հորինած անվերջանալի հեքիաթները ներկայանում են մեզ ամենատարբեր հաղորդաշարերի կամ միմյանց հաջորդող սերիալների տեսքով եւ հանդիսատեսին մշտապես սլահում «ցանկալի կախվածության» մեջ յուրովի փոխարինելով, եթե կուզեք, կյանքի պակասող բովանդակությանը:

Հեռուստատեսության ամենամեծ էֆեկտը մարդն է: Ամենաժամանակակից տեխնիկան անգամ ի զորու չէ լցնել էկրանը գեղեցիկ բովանդակությամբ, եթե կադրի տարածությունը չի իմաստավորվում մարդ-անհատի հետաքրքիր կերպարով: Ով էլ որ հայտնվի այդ մոգական շրջանակի կենտրոնում՝ լուրեր ընթերցող խոսնակ թե ռեպորտաժ վարող լրագրող, պրոբլեմներ քննարկող մեկնաբան թե զվարճանքի հանդիսավար, սերիալի հերոս թե գովազդային հոլովակի տիպաժ՝ նրա մասնավոր ներկայությունը վաղ թե ուշ դառնում է ընդհանրական, որովհետեւ մեր օրերի հեռուստատեսությունը ոչ միայն արտացոլում է հասարակության դեմքը, այլեւ հաստատակություն ձեւավորում բատ իր պատկերի ու լեզվի:

Մի քանի օր առաջ, երբ «Մոսկվա» կինոթատրոնում դիտում էինք ռուսական նորագույն ֆիլմերից մեկը, որը Երեւան է բերվել «Մոսֆիլմի» փառատոնի շրջանակներում, դերասանուհի Օլգա Տումայկինան ասաց. «Չեր պատկերացնի, թե ինչ հաճույք ստացա այս դիտումից, թեպետ ֆիլմն արդեն տեսել էի հեռուստատեսությամբ: Փառք Աստծո, այս անգամ ոչ-մի գովազդային հոլովակ «չցայտեց» ֆիլմի ինտոնացիան ու սյուժեն»:

Գեղագետի երջանկությունն այս դեպքում հասկանալի է, բայց ավելի քան միամիտ, քանզի հեռուստատեսությունը երբեք չի հրաժարվի իր օրապահիկը երաշխավորող գովազդից:

Սակայն գովազդի ֆենոմենը աստիճանաբար դառնում է հասարակական մթնոլորտի ձեւավորման խնդիր:

Մի «գեղեցիկ» օր բոլորս էլ սկսեցինք արձանագրել, որ գովազդն ամրագրվել է մեր հեռուստատեսային եթերում՝ գլխավոր գործող անձի կարգավիճակով: Սա ժամանակի իրողությունն է, որից այլեւս չես հրաժարվի, բայց որի բնույթն ու բովանդակությունը շատ հաճախ հարցեր ու անհանգստություններ են ծնում:

Գովազդի նպատակն «էստի համեցեքն» է՝ պարզ, հասկանալի դերակատարություն, բայց ռուսական կամ արեւմտյան հոլովակները շատ անգամ ապացուցում են, որ ցանկացած գովազդ կարող է դառնալ նաեւ մի փոքրիկ գեղարվեստական ստեղծագործություն, այսինքն՝ ճաշակ կրթել, գեղեցիկի ներկայություն ապահովել: Մինչդեռ մեր դեպքում հակառակն է:

Գովազդի գաղափարախոսությունը կարդալ՝ նրա եվրոպական, արեւմտյան նմուշների, որոնք բազմիցս ցուցադրվում են մեր էկրաններին: «Աեավասիկ կատարյալը, լավագույնը, բացառիկը,- ասում են նրանք,- ծգտի՛ր դրան եւ ինքդ էլ կատարյալ կդառնաս»: Այնքանով արված գովազդը նետի պես մղված է հենց այս նպատակին, նույնիսկ երբ լուծումը հումորիստական է, իսկ գործող անձինքը կին լինի թե տղամարդ, հենց վայելչության ու կատարելության չափանիշներ են առաջարկում մեզ: Օրվա մեջ տասնյակ անգամներ ցուցադրվելով այդ հոլովակները մարդկային տիպեր են տիրաժավորում:

Մերն էլ է տիրաժավորում, բայց արի ու տես, որ հայրենական գովազդարտադրության մեջ տիրապետող է դարձել «կրետինի» դիմակը՝ ամիսամ ծամածռություններով, վուլգար ժեստով, ձայնի գավառական հնչերանգով եւ, իբրեւ թե, «կյանքի լեզվով»: Գուցե սա որոշակի տիպ հեգնելու ենթատեքստ ունի, բայց իրականում բազմապատկում, շարունակ ներարկում է հենց այդ զետնաքարշ ոճը՝ ստեղծելով ժամանակակից հայի մի անհեթեթ կերպար, որի բառապաշարը, շարժուձեւը, վարքագիծը վաղ առավոտվանից մինչեւ ուշ գիշեր լցվում է մեր բնակարանները, փոխանցվում դեռահասներին ու պատանիներին: Ցավ ես ապրում տեսնելով, թե թատրոնի դասական խաղացանկից մեզ հայտնի դերասանները ինչպես են խեղկատակների վերածվում, որից հետո, բեմ վերադառնալով, որքան էլ փորձեն Շեքսպիրի կամ Չեխովի հերոս խաղալ, այլեւս չեն հաղթահարվում ինքնց «սանեկրոտության դիմակից»:

Հասկանանք, որ սա էլ «լավ կյանքից չէ»: Բայց ինքնախաբեություն կլինի մտածելը, թե նույն միջոցներով հնարավոր չէ միանգամայն ուրիշ եղանակ ստեղծել, եթե մի պահ դադար առնենք ու պատկերացնենք, որ նույնիսկ պաղպտղակ գովազդելիս «գերխնդիր» կոչվածը ոչ միայն առեւտրական է, այլեւ... մշակութային:

Հեռուստատեսությունն ասվածն էլ նախեւառաջ մշակույթ է՝ անկախ այն բանից, թե տվյալ պահին ինչ հաղորդում է հեռարձակվում՝ քաղաքակա՞ն, մարզակա՞ն, թե՞ գեղարվեստական: Էկրանը կոչված է, որ կյանքի ճշմարտություններն ստանալի, ընդ որում՝ ոչ միայն փաստն ու դեպքը, այլեւ պրոբլեմը, մթնոլորտը, մտայնությունները: Բայց նույն էկրանը չափանիշներ դնելու ու թելադրելու համար չէ՞, եթե սեփական հոգեւոր ու մշակութային ժառանգության պահպանման խնդիրն ենք հետապնդում:

Իսկ մի՞թե սա գովազդով պիտի արվի հարցնում է մեր հանրանական ընդդիմախոսը, թեեւ շատ լավ գիտի, որ գովազդն ընդամենը օգնական է, մեր գիտակցության ու ենթագիտակցության վրա առավել շատ ազդող հեռուստալրոն, որին ամենակտնաչ ծանոթ տվյալ եւ ոչ մի եվրոպական (նաեւ ամերիկյան) հեռուստաընկերություն Ձմեռ պապիկի ձեռքերի մեջ օրու շիշ չի դնում եւ այդ անճոռնի «ռեժիսորական գյուտը» չի հեռարձակում Ամանորի նախաշեմին ու Ամանորից հետո՝ ի տես Հայաստանի բոլոր մանկիկների:

Իմ լավ բարեկամներից մեկը մի օր ասաց. «Ի վերջո, Նատա Շելեպչանը մի ամբողջ սերնդի գեղեցիկ ժպտալ եւ նույնքան գեղեցիկ խոսել սովորեցրեց»: Գուցե սա չափազանցություն է, բայց հույժ իրական բովանդակությամբ, որովհետեւ ինչպիսին մեր էկրանը կլինի, այնպիսին էլ, ի վերջո, կդառնանք մենք: Այս մասին մտածում եմ՝ «Շանթ» հեռուստաընկերության կամ «Արմենիա»-ի «Բեռնարդ-շոու» էլիտար անունը կրող հաղորդման ամենօրյա ծամածռություններից հաճախակի տխրելով եւ հետո էլ հիշեցնելով կինոգետների ու սոցիոլոգների այն պնդումը, որ թեպետ Հոլիվուդն ամերիկացիք սաեղծեցին, բայց հետո հենց Հոլիվուդը սկսեց... ամերիկացիներ ստեղծել:

Կատակերգություն այսօրվա մասին

Մարտի 28-ին Համազգային թատրոնում առաջնահերթ էր: Ներկայացվում էր Ժիրայր Ավանյանի «Շաբաթն ուրբաթից շուտ եկավ» կատակերգությունը՝ թատրոնի գլխավոր ռեժիսոր Հրաչյա Գասպարյանի բեմադրությամբ: Առաջին ներկայացման ընդմիջմանը հանդիպեցինք բեմադրիչին ու դերակատարներին եւ փորձեցինք պարզել, թե ինչի մասին է այն: Գլխավոր հերոսի դերակատար Դավիթ Հակոբյանը նաեւ թատրոնի գլխավոր դրամատուրգն է, բացի դրանից, վերջին տարիներին նաեւ բեմադրություններ է իրականացնում, ու այդ պատճառով նրան ավելի ու ավելի քիչ ենք տեսնում որպես դերասանի:

- Ո՞վ է Ձեր ներկայացրած նոր կերպարը, ինչ է ավելացնում այն ձեր դերացանկին, իսկ ներկայացումը՝ թատրոնի խաղացանկին:

- Չէի ասի, թե պիեսով շատ ենք ոգեւորվել, թե չափազանց հզոր դրամատուրգիական գործ է եւ այլն, բայց պիեսը շատ է այսօրվա հայ մտավորականի, հայ մարդու մասին: Եվ այսօրվա հայ մարդու ցավը ցուցադրված է ոչ թե փիլիսոփայական ընդհանրացմամբ կամ ողբերգական շեշտերով, այլ կենցաղային կատակերգության ժանրով: Սա, իմ կարծիքով, հետաքրքիր է: Այսօր հայ մարդը ստիպված է դեսուդեն զարկվել ընտանիքը պահելու համար: Իմ հերոսը տարածված այս երեւույթի կրողն է. գնացել է Ռուսաստան, աշխատում է եւ կի ներկայությունն ապահովել: Մինչդեռ մեր դեպքում մեծ մասամբ հակառակն է:

Ո՞րն է սրա պատճառը՝ վարպետե՞ր չունենք: Իսկ գուցե գումարնե՞րն են համեստ: Այս վերջին բացատրությանն հետ անպայման պետք է լրջորեն հաշվի նստել, բայց համարձակվում եմ ենթադրել, որ բեմադրական ամենաճոխ պայմանների առկայությունն ամենեւին չի փրկում դրությունը, որովհետեւ գումարներից առաջ (եւ ավելի), ամենինչ որոշում է մտածողությունը:

Փորձենք գովազդի գաղափարախոսությունը կարդալ՝ նրա եվրոպական, արեւմտյան նմուշների, որոնք բազմիցս ցուցադրվում են մեր էկրաններին: «Աեավասիկ կատարյալը, լավագույնը, բացառիկը,- ասում են նրանք,- ծգտի՛ր դրան եւ ինքդ էլ կատարյալ կդառնաս»: Այնքանով արված գովազդը նետի պես մղված է հենց այս նպատակին, նույնիսկ երբ լուծումը հումորիստական է, իսկ գործող անձինքը կին լինի թե տղամարդ, հենց վայելչության ու կատարելության չափանիշներ են առաջարկում մեզ: Օրվա մեջ տասնյակ անգամներ ցուցադրվելով այդ հոլովակները մարդկային տիպեր են տիրաժավորում:

Մերն էլ է տիրաժավորում, բայց արի ու տես, որ հայրենական գովազդարտադրության մեջ տիրապետող է դարձել «կրետինի» դիմակը՝ ամիսամ ծամածռություններով, վուլգար ժեստով, ձայնի գավառական հնչերանգով եւ, իբրեւ թե, «կյանքի լեզվով»: Գուցե սա որոշակի տիպ հեգնելու ենթատեքստ ունի, բայց իրականում բազմապատկում, շարունակ ներարկում է հենց այդ զետնաքարշ ոճը՝ ստեղծելով ժամանակակից հայի մի անհեթեթ կերպար, որի բառապաշարը, շարժուձեւը, վարքագիծը վաղ առավոտվանից մինչեւ ուշ գիշեր լցվում է մեր բնակարանները, փոխանցվում դեռահասներին ու պատանիներին: Ցավ ես ապրում տեսնելով, թե թատրոնի դասական խաղացանկից մեզ հայտնի դերասանները ինչպես են խեղկատակների վերածվում, որից հետո, բեմ վերադառնալով, որքան էլ փորձեն Շեքսպիրի կամ Չեխովի հերոս խաղալ, այլեւս չեն հաղթահարվում ոչ միայն իր, այլեւ ընկերոջ ընտանիքին: Հիմա մի քանի օրով տուն է եկել եւ տեսել, որ չկա այլեւս իր պատկերացրած ընտանիքը, չկան նախկին հարաբերությունները: Հասկանում է, որ փլուզվել է այն ամենակարեւորը, ինչի համար ինքը օտար երկիր է մեկնել՝ ընտանիքը: Ներկայացումը սիրվելու եւ մնալու է խաղացանկում, որովհետեւ բեմում հանդես եկող չորս հոգին ծանոթ են հանդիսատեսին, իրենք են, իրենց բարեկամները, ընտանիքի անդամները: Հոգսը նույնն է, ցավը նույնը:

- Կարեւոր չէ դավաճանե՞լ է կինը արտասահման մեկնած ամուսնուն, թե՞ ոչ,- ասում է բեմադրիչ Հրաչյա Գասպարյանը:- Կարեւորն այն է, որ այս կասկածը կա բոլոր կիսված ընտանիքներում, եւ դրանք բոլորը կիսափլուզված են: Բարի, ազնիվ, աշխատավոր մարդիկ կորցնում են իրենց համար ամենակարեւորը՝ ընտանիքը, որը նաեւ ազգի պահպանման գլխավոր հիմքն է: Այսօր սա երեւույթ է, եւ խնդիրը կենցաղայինից վեր է բարձրացած: Մենք կատակերգություն ենք ներկայացնում, որի ընթացքում բացահայտվում է թյուրիմացությունը, եւ ընտանիքը խուսափում է փլուզումից: Սակայն իրականությունում այն արդեն փլուզված է: Այսօր վիճակագրական տվյալները խոսում են մինչեւ 80% ամուսնալուծությունների մասին: Սա խնդիր է, համազգային պրոբլեմ, որովհետեւ մի շատ կարեւոր նրբություն կա «չի կարելի «բրախել» ժողովրդին, չի կարելի թույլ տալ, որ ժողովուրդն իրեն անտեր ու անպաշտպան զգա:

- Ես էլ մարմնավորում եմ այն մարդուն,- ասում է Պարգեւի դերակատար Արայիկ Կարագյանը,- որը մնում է հայրենիքում եւ իր վրա վերցնում ոչ միայն իր, այլեւ մեկնած ընկերոջ, հարազատի ընտանիքի ամենօրյա հոգսը:, Իմ կերպարն անում է ամեն ինչ, որպեսզի անխաթար մնա ավանդական հասկացությամբ հայ ընտանիքը, սակայն դառնում է թյուրիմացության զոհ: Առաջին հայացքից այս կատակերգական իրավիճակի մեջ խորը դրամատիզմ կա, ինչը կերպարն ու պիեսը դարձնում են առավել հետաքրքիր: Կերպարը շատ ծանոթ է: Պարկեշտ մարդ, բայց դրսինի ձեռքին նայող, որովհետեւ չկա աշխատանք, չկա արժանապատիվ ապրելու հնարավորություն:

Հ. ԵՐԱՆՅԱՆ

ԵՐԿԻՐ
29 ՄԱՐՏ-4 ԱՊՐԻԼ, 2002 #10/1661/

Հայդուկներն անմահ են

Շահումյանից նոր էինք վերադարձել Երեւան, երբ սկսվեց Արցախյան շարժումը: Մեկ տարի էր, ինչ Սարգիսն աշխատում էր «Ալմաստ» գործարանում: Նա այն մարդկանցից չէր, որ կարողանար հեռվից հետեւել պատմության ընթացքին, ուստի զենք վերցրեց ու մեկնեց Շահումյանի շրջան՝ օգնելու դարավոր թշնամու դեմ ըմբոստացած իր զինակիցներին, որոնց առաջնորդում էր Շահեն Մեղրյանը:

Լիանա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Թշնամին գերակշռում էր թվով, զինված էր ժամանակակից տեխնիկայի տարբեր տեսակներով: Պատմությունը տարեգրության մի նոր ողբերգական էջ լրացրեց՝ Շահումյանի շրջան, 1991 թ. հունիսի 13... Թշնամու առաջ երբեւէ ծնկի չեկած Շահումյանը խորհրդային բանակի միջամտությամբ հանձնվեց թշնամուն:

Սարգիսը վրեժ ուներ լուծելու եւ չէր կարող կիսատ թողնել իր ճանապարհը: Որպես տանկիստ՝ թուրքերին վրեժխնդիր եղավ իր տանկով Մարտակերտի շրջանում: 1992-ին մասնակցեց Մարտակերտի շրջանի բռնագրավված բնակավայրերի ազատագրման համար ծավալված դժվարին մարտերին: Իսկ հոգին չէր կարող խաղաղվել, քանի դեռ հայրենի գյուղը՝ Բուզլուխը, գերության մեջ էր: Եվ լսելով թշնամուն ահ ու սարսափ ներշնչող քաջ հայդուկապետ Շահեն Մեղրյանի պարտիզանական ջոկատի գործունեության մասին՝ Սարգիսը որոշեց գնալ ու միանալ նրան՝ մոտեցնելու Շահումյանի ազատագրման օրը: Ոչ մի հորդոր չկասեցրեց նրա որոշումը, քանի որ մի նպատակ ուներ միայն՝ Շահումյանը տեսնել ազատագրված: Եվ անընդհատ կրկնում էր Շահենի խոսքերը. «Շահումյանի ճանապարհն անցնում է Տոնաշենով...»:

Քաջ հայդուկապետը Եռաբլուրի բարձունքում հավաքել է իր զինակիցներին, ու խորհում են, թե ինչպես եղավ, որ իրենց գործն անավարտ մնաց: Ու կարծես դժգոհում են, որ Շահումյանը թողեցինք գերության մեջ...

Վարդան Վահանյան

... Գարուն էր, պայծառ գարուն: Տոնաշենի պայծառ գարուններից մեկը: 1993 –ի մարտն էր, որ Դիանայի ու Էդգարի համար ընդմիշտ անավարտ դառը հուշերի ամիս մնաց: Նրանք չորս եւ վեց տարեկան էին ու անհամբեր սպասում էին հայրիկի վերադարձին: Նա խոստացել էր մարտի 31-ին տանը լինել՝ միասին նշելու իր 31-ամյակը: Դեռ սպասում են հույսով. ախր, հայրը խոստումնազանց չէր ու իրենց շատ էր սիրում... Իսկ այսօր թերթում եմ 13-ամյա Դիանայի դպրոցական տետրն ու էջերից մեկում կարդում եմ.

- Ու եթե հանկարծ ես կարողանայի հետ վերադարձնել ժամանակը, օրացույցից կհանեի գարունը... Ոչ, չեմ ջնջի, թող այն մնա, բայց ամեն անգամ միայն խինդ ու ծիծաղ բերի մանուկներին... Ես միայն կջնջեի մարտի 27-ը:

Սարգիս Հարությունյան

Եթե չլիներ գարնանային այդ դաժան օրը, Սարգիսն այսօր բալիկների հետ կնշեր իր 40-ամյակը: Նրա կողքին կլինեին նաեւ իր քաջարի զինակիցները՝ Վերդյան Հայկն ու Վահանյան Վարդանը, որոնք ուս ուսի մարտնչեցին հայրենիքի ազատագրության համար եւ զոհվեցին նույն մարտում:

Ու նորից գարուն է...

Քաջ հայդուկապետը Եռաբլուրի բարձունքում հավաքել է իր զինակիցներին, ու խորհում են, թե ինչպես եղավ, որ իրենց գործն անավարտ մնաց: Ու կարծես դժգոհում են, որ Շահումյանը թողեցինք գերության մեջ...

Հայկ Վերդյան

ԲՈՂՈՔ

Կամայական մերժեցումները դատապարտված են



Հայաստանի ճարտարապետների միության դահլիճում երեկ հավաքված արվեստասեր հասարակությունը, որ գունազարդ ազդագրերին խաբվելով եկել էր ոմն Ռիչարդ Հակոբյանի բալլադները լսելու, ակամա ականջալուր եղավ մեր ազատագրական պայքարում ծնված երգերին, որ, ի նշան բողոքի, ճեմասրահում կատարեցին ՀՅԴ Հայաստանի երիտասարդական միության անդամները:

Պարսավանքի խոսքեր ուղղելով համերգի կազմակերպիչների հասցեին նրանք բողոքում էին, այսպես կոչված թուրք-հայկական մերձեցման կամայական փորձերի ու դրանք խրախուսողների դեմ, վանկարկում, որ Հայոց եղեռնը մոռանալու յուրաքանչյուր քայլ առնվազն դավաճանություն է:

Շփոթահար հանդիսատեսի ներկայությամբ մենք փորձեցինք որեւէ բացատրություն ստանալ համերգի կազմակերպիչներից եւ պատասխանատուներից: Բեմի մոտ խռնված մեկ տասնյակից ավելի տղամարդկանցից ոչ ոք հանձն չառավ պատասխանել մեր հարցերին: Դա էլ պարզ վկայությունն էր այն բանի, որ որպես համերգի կազմակերպիչներ հանդես եկող Վաշինգտոնի համալսարանի գլոբալ խաղաղության կենտրոնն ու, այսպես կոչված հայ-թուրքական բիզնեսի զարգացման կենտրոնը հերթական փորձն էին արել թուրքական կողմին սիրաշահելու եւ նրա հետ համագործակցության ասպարեզ բացելու նպատակով:

Տեղում ծանոթանալով իրավիճակին ու սպասվող համերգի էությանը որոշ հայտնի արվեստագետներ ու մի խումբ ծնողներ իրենց երեխաների հետ լքեցին դահլիճը: ՀՅԴ ՀԵՄ անդամներն ազդեցիկ ցույցի արդյունքում համերգը սկսվեց ուշացումով:

Ի դեպ, այս միջոցառումը առաջինը չէր, որ ներքաղաքական դաշտի աջ ուժերի հովանավորությամբ անցկացվեց Հայաստանի ճարտարապետների միության շենքում: Ինչպես նշեցին շենքի պատասխանատուները, իրենք դահլիճը նման խայտառակ միջոցառումների տրամադրում են զուտ ֆինանսական նկատառումներով:

ԷԴ. Ա.

ԼՈՒՐԵՐ

Ավարտվեց Համազգայինի համագումարը

Մարտի 21-24-ը Լիբանանում գումարվեց Համազգային հայ կրթական եւ մշակութային միության չորրորդ պատգամավորական ժողովը, որին մասնակցեցին շրջանների պատգամավորներ եւ հրավիրյալներ:

Ուշադրության արժանացան Համազգայինի երկու ճեմարանները (Լիբանանում եւ Ֆրանսիայում), հայագիտական հաստատությունը, տպարանն ու հրատարակչատունը, մասնաճյուղերի ծավալած բազմակողմանի գործունեությունը մշակույթի տարբեր ոլորտներում: Ժողովը անդրադարձավ նաեւ հայ մտավորականության առնչվող հարցերի:

Պատգամավորական ժողովը ներկայացրեց Համազգայինի գործունեության հեռանկարները առաջիկա չորս տարում: Խոր վերլուծության ենթարկվեցին նյութական հնարավորությունները:

Տեսակետների փոխանակությունից եւ քննարկումներից հետո ժողովը հանգեց համապատասխան եզրակացությունների, որոնք, իբրեւ հավաքական կամքի արտահայտություն, առաջիկա քառամյակի համար ուղեցույց պիտի լինեն:

Պատգամավորական ժողովը ընտրեց նոր Կենտրոնական վարչություն: Վերջինս անդրանիկ ժողովը գումարեց մարտի 25-ին «Նշան Փալանճյան» ճեմարանի իր կենտրոնում եւ ընտրեց դիվան:

Վարչության ատենապետ ընտրվեց Մկրտիչ Մկրտչյանը: Նրա կազմում է նաեւ ՀՀ ԱԺ պատգամավոր Ռուբեն Հովսեփյանը:

Պրոֆեսոր Տատրյանի նոր հրապարակությունը

Միջին Արեւելքի ուսումնասիրությունների միջազգային պարբերաթերթը փետրվարի համարում հրապարակել է պրոֆ. Վահագն Տատրյանի «Հայկական հարցը եւ պատերազմի ընթացքում հայերի ճակատագիրը Օսմանյան կայսրության դաշնակիցներ Գերմանիայի եւ Ավստրո-Հունգարիայի պաշտոնատարների արձանագրություններում» աշխատությունը:

Ուսումնասիրության նախաբանում Տատրյանը գրում է, թե քանի որ Հայկական հարցի շուրջ ուսումնասիրությունները քաղաքականացված են, հայկական եւ օսմանյան արխիվների անհիման կերպով կասկածելի են համարվում: Հետեւաբար, շարունակում է Տատրյանը, ավելի նպատակահարմար է պալավինել գերմանական եւ ավստրո-հունգարական կայսրությունների՝ Օսմանյան կայսրության ռազմական դաշնակիցների արխիվներին:

Նշյալ աշխատությունը անդրադառնում է Հայկական հարցի տարբեր կողմերին, քրդական գործոնին, հայկական բարեփոխումների հարցին, թշնամու հետ համագործակցելու հայերին վերագրվող մեղադրանքին, հայերի հավաքական ոչնչացման միջոցով Հայկական հարցի լուծման գաղափարին, այդ ծրագրի վերահսկողության եւ իրագործման միջոցներին:

ճնշում Թուրքիայի վրա

Ամերիկյան հեղինակավոր «Boston Globe» թերթը իր մարտի 25-ի համարում շահեկան հոդվածով անդրադարձել է թուրք-ամերիկյան կապերին եւ թուրքական պետության սեւ էջերին:

The Boston Globe

«Դա նշանակում է, որ Թուրքիան մաքրված է դավաճաններից, քրիստոնյաներից ու օտարներից, եւ որ Թուրքիան թուրքերի համար է»:

Մուստաֆա Քեմալ Աթաթուրք

Թեեւ Մուստաֆա Քեմալը հայտնի է Թուրքիան աշխարհիկ կառավարությամբ օժտելով, սակայն Փոքր Ասիայում հույն, ասորի եւ հայ ազգաբնակչության դեմ նա պատերազմեց որպես ջիհադ:

Ս եպտեմբերումը պատկանում է թվացյալ աշխարհիկ եւ ժողովրդավարական Թուրքական Հանրապետության հիմնադրին: Իրականում Մուստաֆա Քեմալը վերջ դրեց Անատոլուի հայկական, ասորական եւ հունական դարավոր մշակույթներին: 1922 թ. սեպտեմբերի ռազմական «հաղթանակի» հետեւանքով ավելի քան հարյուր հազար հույն եւ երեսուն հազար հայ սպանվեց պատմական Զմյուռնիա (Իզմիր) քաղաքում: 1923-ին Քեմալը հրահանգեց ավելի քան մեկ միլիոն հույների տեղահանել Փոքր Ասիայից:

Հույն ուղղափառ քրիստոնյաների համար ջիհադ, գյավուր եւ անհավատ բառերը, որ այսօր շատ են օգտագործվում Ուսամա բեն Լադենի նման ոճրագործների կողմից, նորություն չեն: Դարեր շարունակ թուրք ղեկավարներն այդ բառերն օգտագործում էին քրիստոնյաներին ստորացնելու եւ նրանց հանդեպ ատելություն սերմանելու համար: Այս երեւույթը շարունակվեց Օսմանյան կայսրության ժամանակներից մինչեւ Թուրքական Հանրապետության օրերը, որը ջարդեր կազմակերպեց իր հույն եւ հայ փոքրամասնությունների դեմ: Թեեւ Մուստաֆա Քեմալը հայտնի է Թուրքիան աշխարհիկ կառավարությամբ օժտելով, սակայն Փոքր Ասիայում հույն, ասորի եւ հայ ազգաբնակչության դեմ նա պատերազմեց որպես ջիհադ:

Հույն ուղղափառ քրիստոնյաները Քեմալի եւ նրա գործակիցների վայրագությունները հիշում են հուշարձանների եւ կրոնական դեմքերի նահատակության պատմություններից: Դրանցից է արքեպիսկոպոս Խրիսոսթոմոսի սպանությունը, որին քառատելու հրահանգը տվել էր Քեմալի գլխավոր զորավարներից մեկը: Ուղղափառ քրիստոնյաների համար թալիբանների եւ Ալ-Քաիդայի մերօրյա ոճրագործ զազրելի քաղաքականությունները նմանվում են օսմանյան եւ քեմալական Թուրքիայի 1914-1923 թվականներին վարած քաղաքականությանը:

Ուսամա բեն Լադենի եւ նրա գործակիցների նման երիտթուրքերն ու Մուստաֆա Քեմալի ազգայնականներն էլ էին տոնում անմեղների սպանդը:

Երիտթուրքերը ծրագրեցին ու կազմակերպեցին ավելի քան 1,5 միլիոն քրիստոնյա հայերի ցեղասպանությունն ու հավաքական բնաջնջումը: Ահաբեկչության դեմ պատերազմի ծավալմանը զուգահեռ, Վաշինգտոնը պարտավոր է վերջապես լուրջ մոտեցում ցուցաբերել չարի բոլոր դրսեւորումների հանդեպ իր պայքարում եւ ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Միացյալ Նահանգները պարտավոր է բացահայտորեն ասել Թուրքիային, թե չպիտի թույլ տա պատմության գրաքննության ներմուծումը Ամերիկա: ԱՄՆ-ը պարտավոր է ճանաչել նաեւ հույների եւ ասորիների դեմ իրագործված ջարդերը:

Ահաբեկչության դեմ հսմաշխարհային պայքարում ԱՄՆ-ը պետք է ճնշում գործադրի իր այն դաշնակիցների վրա, որոնք քաջալերում են ահաբեկչությունը: Կոստանդնուպոլսի էկումենիկ պատրիարքարանը, որը արեւելյան ուղղափառ քրիստոնեության հոգեւոր կենտրոնն է, հաճախ է ենթարկվում ռմբակոծումների: Պետք է ճնշում գործադրել թուրքական իշխանությունների վրա, որպեսզի վերջ տրվի այն մթնոլորտին, որի պայմաններում քաջալերվում են քրիստոնյաների դեմ հարձակումները: Պատրիարքարանի դեմ խտրականության լավագույն փաստը պարտադրանքով նրա միակ աստվածաբանական դպրեվանքի փակումն է:

Վերջապես, Միացյալ Նահանգները պետք է պարտադրի Թուրքիային դադարեցնել Կիպրոսում ահաբեկչության ու ցեղային զտմանն քաղաքականության հովանավորումը: 1974 թ. Թուրքիայի Կիպրոս ներխուժման արդյունքում ավելի քան երկու հարյուր հազար հույն տեղահանվեց իր ազգային ու կրոնական պատկանելության համար: Ավելի քան 1600 կիպրացի հույներ անհետ կորան: Թուրքական կառավարությունը, որի բանակը բռնազավթել է Հյուսիսային Կիպրոսը, պատասխանատու է այնտեղ պարբերաբար տեղի ունեցող բոլոր վայրագությունների եւ սպանությունների, ինչպես նաեւ 1996-ի ամռանը բազմաթիվ հույն կիպրացիների ոչնչացման համար:

Թեոդորոս Կ. ԿԱՐԱՔՈՍԹԱՍ
«Boston Globe»

ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Եվրամիության դռները փակ են

Եվրամիության կողմից Թուրքիայի նկատմամբ եղած պահանջներն ու պայմանները շարունակում են ներ կացության մեջ պահել այդ կառույց ընդունվելու դիմում ներկայացրած Անկարային: Չնայած դրան, թուրքական պաշտոնական շրջանակները շարունակում են հարցին լուծում գտնելու ուղիների փնտրտուքը՝ բնականաբար, փորձելով շրջանցել եղած պայմանները: Թուրքիայի արտգործնախարար Իսմայիլ Ջեմը հայտարարել է, որ հարկավոր է արագ լուծում գտնել վերջին ժամանակներս Թուրքիայի եւ Եվրամիության միջեւ առկա թյուրիմացությունների կարգավորման համար:

Գյունտեր Ֆերհյոգեն

Բրյուսելում Թուրքիա-Եվրամիություն հիմնադրամի հրավիրած խորհրդաժողովին մասնակցելու համար Բելգիա մեկնելուց առաջ, Թուրքիայի արտգործնախարարն, անդրադառնալով իր քննարկելիք հարցերի շրջանակին, ասել է, որ հարկավոր է վերացնել այն բոլոր արտահայտությունների ու գործողությունների ազդեցությունները, որոնք պատճառ են դարձել թյուրընկալումների համար: Նա նշել է, որ Բրյուսելում քննարկվելու է նաեւ Կիպրոսի հարցը եւ հույս հայտնել, որ Եվրոպան ավելի «զգայուն» կլինի այդ խնդրի նկատմամբ: Միաժամանակ նա կարծիք է հայտնել, որ Եվրամիությունն ի վիճակի է ազդել կղզու հունական մասի վրա ավելի «կառուցողական մոտեցումներ» որդեգրելու համար:

Ըստ թերթի, ապրիլի 16-ին տեղի է ունենալու Իսմայիլ Ջեմի եւ Եվրամիության ընդարձակման գծով գլխավոր կոմիսար Գյունտեր Ֆերհոյգենի հանդիպումը, որի ժամանակ քննարկվելու են Թուրքիա-Եվրամիություն ընդհանուր համաժողովի նախապատրաստման, Թուրքիայի «ազգային ծրագրի» իրականացման գործընթացի եւ Եվրամիություն-Թուրքիա ներկայիս հարաբերություններին վերաբերող հարցեր:

Սակայն մինչ հանդիպումը արդեն Եվրամիության ընդլայնման աշխատանքների հանձնակատար Գյունտեր Ֆերհյոգենը մասնակցել է Հունաստանում կազմակերպած հավաքի եւ այդ առիթն օգտագործել Թուրքիայի հասցեին հայտարարություններ անելու համար:

Մամլո ասուլիսի ընթացքում նա ընդունել է, որ Թուրքիային անդամակցության թեկնածու դարձնելու որոշումից հետո քաղաքական ու տնտեսական ոլորտներում որոշ առաջընթաց է արձանագրվել, եւ ավելացրել, թե վստահ է, որ նման բարեփոխումներ չէին լինի, եթե Եվրոպան այդպիսի ռազմավարություն չորդեգրեր Անկարայի հանդեպ:

Ֆերհյոգենը կրկին շեշտել է, որ ձեռնարկված քայլերը բավարար չեն, եւ Թուրքիայի անդամակցության ժամկետը կախված է այդ երկրի հետագա քայլերից: **«Չի կարելի անդամակցության բանակցություններ սկսել, եթե Թուրքիան չիրագործի առաջադրված պայմանները: Առաջին պայմանն այն է, որ հարգվեն մարդու իրավունքներն ու կրոնական ազատությունները»**,- ասել է նա:

ՊԱՅՔԱՐ

PKK բանվորական կուսակցությունը՝ նոր անունով

«Մարմարան» տեղեկացնում է, որ Քուրդիստանի բանվորական կուսակցությունը, որն իր ղեկավար Աբդուլա Օջալանի ձերբակալությունից եւ մահապատժի դատապարտվելուց ի վեր քաղաքական պայքարի նոր ուղիներ է փնտրում, որոշել է փոխել անունը: Կազմակերպությունը քաղաքական պայքարը շարունակելու է «Ժողովուրդների ազատության կուսակցություն» (ԺԱԿ) անվանումով: Կուսակցությունն իր անունից հանում է «Քուրդիստան» բառը:

Դրանով հանդերձ, կուսակցությունը շարունակում է արդարացնել զինյալ կազմակերպություն լինելը: Իր զինված ուժերը որակելով ազգային պաշտպանության ուժ Ժողովուրդների ազատության կուսակցությունը հայտարարում է, թե Օջալանի մահապատժի իրականացումը համարում է Թուրքիայի դեմ պատերազմի պատճառ, նաեւ քաղաքական ներում է պահանջում իր մյուս անդամների համար:

ԺԱԿ-ը որդեգրելու է այնպիսի քաղաքականություն, որը քիչ կանհանգստացնի Եվրոպային: Սակայն Թուրքիայի ղեկավարներն ու զինվորականները պնդում են, թե քրդերն անկեղծ չեն, եւ Թուրքիան չպետք է խաբվի այդ կերպարանափոխմամբ:

Թուրքիայի վարչապետ Բյուլենթ Էջեւիթը, Բուկրեշում պատասխանելով լրագրողների հարցերին, ասել է, թե Քուրդիստանի բանվորական կուսակցությունը այժմ քողարկման շրջան է թեւակոխում: «Անջատողական կազմակերպությունը, թաքցնելով իր բուն էությունը, իբր թե ուրիշ կերպի մեջ է մտնում: Այդ խնդրում Եվրոպայից էլ է զորակցություն ստանում: Բայց հնարավոր չէ, որ Եվրամիությունը չիմանա, թե ինչ է կատարվում»,- հայտարարել է նա:

Սպայակույտի փոխնախագահ զորավար Յաշար Բյույուկքանաթը լրագրողների հետ զրույցի ժամանակ ասել է, թե քրդական կուսակցությունը, փոխելով իր անունը, փորձում է խաղի մեջ ներքաշել դիմացիններին կամ խաղաքարտ տալ նրանց ձեռքը: Օրինակ եթե Թուրքիան բողոքի, որ Եվրամիությունը ահաբեկիչների ցանկը չի դասում կուսակցությունը, հետայսու ԵՄ-ը պիտի կարողանա արդարանալ ասելով, թե Քուրդիստանի բանվորական կուսակցությունը այլեւս գոյություն չունի:

29 ՄԱՐՏ-4 ԱՊՐԻԼ, 2002 #10/1661

Գլուխկոտրուկ,

կամ՝ ինչո՞վ են տարբեր մարզական եւ սեռական փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունները

Մարզական հասարակական կազմակերպությունները, որոնց թվին են դասվում ՀԱՕԿ-ը, մարզական ֆեդերացիաները, ընկերությունները եւ ակումբները, երբեմն լուրջ խնդիրների առաջ են կանգնում: Տարօրինակ է, որ եղած օրենքները, իրավիճակը պարզեցնելու փոխարեն, երբեմն ավելի են խճճում:

Իրավունքների սահմանափակում

ՀԱՕԿ-ը իրավաբանական անձանց միություն է, որն առաջնորդվում է ՄՕԿ-ի սկզբունքներով: Ասկայն մի շարք հակասություններ կան ՀԱՕԿ-ի եւ ՄՕԿ-ի կանոնադրություններում: Փաստորեն, Հայաստանում կիրառվող կանոնակարգով օլիմպիական կոմիտեի անդամ չի կարող դառնալ այն քաղաքացին, ֆիզիկական անձը, որն ընդունում է օլիմպիական գաղափարները, ասպարեզում, մասնակցում է օլիմպիական շարժմանը: Նույնիսկ այս առումով մեծ ներդրումներ է ունենում: Կլինգերի նախագծայնում է, որ նա հասարակական ոչ կազմակերպության անդամ լինի: Ընդհանուր սահմանափակումներ են անձի իրավունքներին այդ կազմակերպության անդամագրվելու հարցում:

Դրանցում օլիմպիական կոմիտեին անդամագրվելու ցանկություն ունեցող ամեն մի քաղաքացի, երե, ինարկե, համապատասխան ներքին ունի: Նաեւ անշանակալի ցանկություն, պետք է այս առումով արգելքի չհանդիպի: Այսպիսով, ազգային օլիմպիական կոմիտեն անսահմանափակումներ կարող է ունենալ, սակայն նստաշրջաններին կմասնակցեն միայն սահմանափակ թվով պատգամավորներ:

Մեկ այլ հակասական իրադրություն. լատ զբաղող կարգի, ՀԱՕԿ-ի անդամ են դառնում օլիմպիական խաղերին մասնակցած բոլոր մարզիկները: Եթե Հայաստանում սպորտը վերելք ապրի, եւ առաջիկա մի քանի օլիմպիական խաղերում մեծ թվով պատվիրակներ ունենանք, ապա կարճ ժամանակ անց կազմակերպության անդամների թիվը կարող է հասնել մի քանի հազարի: Իսկ մի քանի հազար մասնակցով համաժողովներում որեւէ հարց քննարկելը, որոշում ընդունելը պարզապես անհեթեթություն կլինի:

Այժմ ընդունված կարգն այսպիսին է. մարզական բոլոր խոշոր հասարակական կառույցները՝ ֆեդերացիաները, ընկերությունները, ակումբները, անդամագրվել են ՀԱՕԿ-ին եւ ունեն համապատասխան թվով ներկայացուցիչներ:

Այսուհանդերձ, ներկայիս կանոնադրությունը խոցելի շատ տեղեր ունի, քանի որ անհատների իրավունքները սահմանափակվում են: Ի տարբերություն ՀԱՕԿ-ի, հասարակական մյուս կազմակերպությունների ֆեդերացիաների, մարզական ընկերությունների եւ ակումբների անդամներ կարող են դառնալ միայն ֆիզիկական անձինք, այսինքն՝ այդ կարգավիճակ է: Փաստորեն, իրավաբանական անձինք հայտնվում են խաղից դուրս: Կրկին իրարամերժ բեւեռներ են առաջանում: Օրինակ՝ ֆուտբոլային ակումբները այդ մարզաձեւի Հայաստանի ֆեդերացիայից դուրս չի կարելի պատկերացնել՝ սակայն ակումբը ֆեդերացիայի անդամ չի կարող լինել: Ակումբի շահերը ֆեդերացիայում պաշտպանում են այդ կազմակերպության անդամ առանձին անձինք: Մինչդեռ ֆուտբոլի Նախկինում կազմակերպությանը կարող էր անդամագրվել ցանկացած ուսումնական հաստատության մարզական ակումբ: Ներկայումս ստացվում է, որ այդ իրավունքն ունեն միայն ուսումնական հաստատությունների սովորողները: Բայց դրա համար ամեն ուսանող պետք է առանձին դիմում ներկայացնի Ուսանողական մարզական ֆեդերացիայի նախագահ, ՀՀ ԳԿ նախարար Լեւոն Մկրտչյանին: Միայն հազարավոր սովորողների դիմումները քննարկելուց հետո հնարավոր կլինի նրանց անդամագրել կազմակերպությանը: Ակնհայտ է, թե

Հայաստանի ֆեդերացիան ՈՒԵՖԱ-ի եւ ՖԻՖԱ-ի անդամ է: Հարց է ծագում ինչո՞ւ նույնը չի կիրառվում մեզ մոտ: Կամ թենիսի Հայաստանի ֆեդերացիայի անդամ ինչո՞ւ չի կարելի համարել բենիսի «Արարատ» ակումբը որ ոչ կազմակ: Պարզվում է, որ հնարավոր չէ: Փոխարենը ակումբի մեկ կամ մի քանի ներկայացուցիչ պետք է դիմում ներկայացնեն, որպեսզի իրենց ընդգրկեն ֆեդերացիայի կազմում:

Ֆեդերացիային կարող են անդամագրվել նաեւ մարզաձեւի սիրահար առանձին անհատներ: Միջազգային ֆեդերացիաների կանոնակարգերում այսպիսի տարանջատում չկա: Կազմակերպության անդամ կարող են լինել եւ ֆիզիկական, եւ իրավաբանական անձինք: Այսպես, ՄՕԿ-ի անդամներ են եւ տարբեր մարզաձեւերի միջազգային ֆեդերացիաները, եւ նշանավոր անձինք, անգամ՝ գործարարներ:

Զավեշտական իրավիճակ

Այս հակասությունը երբեմն զավեշտի է հանգեցնում: Հայաստանում գործում է Ուսանողական մարզական ֆեդերացիա: ինչպիսի բարդություններ են առաջանում ֆեդերացիայի անդամների հաշվառման, անդամավճարների գանձման եւ այլ հարցերում:

Եթե ամեն ուսումնական հաստատություն իր ակումբով անդամագրվի կազմակերպությանը, ամեն բան ավելի հեշտ կլինի: Ուսանողները կանդամագրվեին ակումբներին, ակումբներն էլ ֆեդերացիային:

Սակայն երբեմն էլ խոչընդոտողը ոչ թե օրենքի անկատարությունն է, այլ պարզապես անտեսումը: Եթե հակասական իրավիճակներ են առաջանում, ապա կարելի է նաեւ չկատարել այն, ինչ սեւով գրված է սպիտակի վրա: Մասնավորապես, ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասին օրենքում նշված է, որ ֆեդերացիաները պետք է զբաղվեն մարզաձեւերի զարգացման, մասսայականացման, Հայաստանի առաջնությունների անցկացման, ազգային հավաքականների նախապատրաստման, Եվրոպայի, աշխարհի առաջնություններին դրանց մասնակցության եւ այլ խնդիրներով:

Սակայն Հայաստանում այդ բանին չենք հասել: Փաստորեն, մարզական պետական կառույցը ֆեդերացիաներին պետք է հանձնի ֆինանսավորման ողջ գումարը: Կազմակերպություններին է վերապահված դրանց տնօրինումը: Մինչդեռ մարզական եւ մասսայական միջոցառումների 2002 թվականի օրացուցային պլանում էլ կարելի է տեսնել, որ կազմակերպող մարմինը հիմնականում մարզական պետական կառույցն է: Այսինքն՝ ֆեդերացիաներն իրենց գլխի տերը չեն: Այլ հարց է, թե ֆեդերացիաներից մի քանիսը (օրինակ ծանրամարտի, բռնցքամարտի) ինչո՞ւ պետք է ստանան այնքան գումար, որքան շատ-շատերը միասին վերցրած: Դա այն դեպքում, երբ հիշյալ մարզաձեւերի ներկայացուցիչները վերջին շրջանում հիմնականում դառնություն են պատճառում:

Բոլորը՝ մեկ կաթսայում

Մարզաշիաթիի ներկայացուցիչների համար գլուխկոտրուկ է դարձել ՀՀ հասարակական կազմակերպությունների մասին օրենքը: Այս մասին իր տեսակետը խնդրեցինք հայտնել «Հայաստան» մարզական միության նախագահ, ՀՀ ուսանողական մարզական ֆեդերացիայի փոխնախագահ, ՀԱՕԿ-ի փոխնախագահ, ՀՀ վաստակավոր մարզիչ ՌԱԶՄԻԿ ԱՏԵՓԱՆՅԱՆԻՆ:

- Օրենքն, ընդհանուր առմամբ, լավ է բոլոր կարգի հասարակական կազմակերպությունների համար: Բայց մարզական կազմակերպությունները որոշ վերապահումներ ունեն: Բանն այն է, որ բոլոր մարզական կազմակերպությունները ուսումնամարզական գործընթաց են իրականացնում: Նրանց աշխատանքը փոխշաղկապված է ոչ միայն միջազգային մի շարք կազմակերպությունների, այլեւ պետական կառույցի հետ:

Հայաստանը Եվրախորհրդի անդամ է դարձել: Անկասկած, մեր երկրում հասարակական կազմակերպությունների թիվը կաճի: Սեռական փոքրամասնությունների կազմակերպության գոյությունն էլ չի կարելի բացառել: Եվ մարզական ու մյուս կազմակերպությունները տեղավորել մեկ կաթսայում, նրանց արտոնել նույն իրավասություններով՝ մեղմ ասած, ճիշտ չէ:

Փաստորեն, մարզական հասարակական կազմակերպությունների մասին օրենքի ընդունումն անհրաժեշտություն է դարձել: Այդ ուղղությամբ աշխատանքներն ընթացքի մեջ են:

ՄՅՈՒՍԻՍԻ

Երեքը՝ խաղից դուրս

Վաղը կմեկնարկի Ֆուտբոլի Հայաստանի գավաթի 11-րդ խաղարկությունը: Նախատեսված էր, որ ստուգատեսին պետք է մասնակցի բարձրագույն խմբի 12 եւ առաջին խմբի 4 թիմ: Բայց տարբեր պատճառներով որոշեցին խաղից դուրս մնալ բարձրագույն խմբի «Լեռնագործ» եւ առաջին խմբի «Արագած», ՖԻՍԱ թիմերը: Փոխարենն այդ իրավունքը տրվեց Եղվարդի «Դինամոյին», Արմավիրի «Արմավիրին» եւ Երեւանի «Լոկոմոտիվին»:

Եվ այսպես, մարտի 30-ին 1/8 եզրափակիչի առաջին հանդիպումներում կմրցեն «Դինամո» (Եղվարդ) - «Փյունիկ», «Բանանց» - «Դարաբաղ», «Լոռի» - «Միկա», «Լոկոմոտիվ» - «Շիրակ» զույգերը:

Իսկ մարտի 31-ին կկայանան «Արմավիր» - «Սպարտակ», «Սպարտակ-2» - «Արարատ», «Դինամո-2000» - «Կոտայք», «Փյունիկ-2» - «Զվարթնոց» հանդիպումները: Պատասխան խաղերը կանցկացվեն ապրիլի 6-ին եւ 7-ին:

«Արարատը»՝ բրոնզե մեդալակիր

Թեհրանի «Արարատ» մարզակումբի շախմատիստները նախորդ տարի Իրանի առաջնության երկրորդ խմբի մրցաշարում ճանաչվել էին առաջինը եւ իրավունք էին ստացել հանդես գալու բարձրագույն խմբում: Եվ ահա, ուժեղագույնների մրցաշարում արարատցիներն արժանացան բրոնզե մեդալների:

Վիրահատությունը հաջող է անցել

Թերեւս, լարված մարզումների, մրցումների հագեցած ծանրաբեռնվածությամբ վերջին շրջանում Վլադիմիր Ավակոբյանը հուսախտ էր դժգոհում տեղադրությունից: Եվ ահա, Լոս Անջելեսում նրան վիրահատել են: Հրուշալի տղերքի ինքնազգացողությունը լավ է: Նա Երեւան կվերադառնա ապրիլի 6-ին:

Վերադառնում են հայրենիք

Ինչպես հայտնի է, Սոլթ Լեյք Սիթիում կայացած օլիմպիական խաղերը վաղուց պատմություն են դարձել, սակայն ստուգատեսի հայաստանաբնակ երեք մասնակիցներից երկուսը տարբեր պատճառներով շարունակում են մնալ ԱՄՆ-ում: Եվ ահա, ինչպես տեղեկացրին սպորտվարչությունում, լեռնադահուկորդ Արսեն Հարությունյանը եւ դահուկորդ Արամ Հաջյանն այսօր վերադառնալու են հայրենիք:

Եվս մեկ քայլ

Անդրե Աղասին հաղթարշավն է շարունակում Կիբիսքեյնի միջազգային մրցաշարում: Հերթական խաղում հայ թենիսիստը 2:0 (7:5, 6:2) հաշվով առավելության հասավ Թոմաս Յուհանսոնի (Շվեդիա) նկատմամբ եւ դուրս եկավ քառորդ եզրափակիչ:

Բաժինը վարում է Գագիկ ԲԵԳԼԱՐՅԱՆԸ

Սբ. Զատիկ

Քրիստոս հարյավ ի մեռելոց

Քրիստոնյա ժողովուրդը Հիսուս Քրիստոսի հարությունը անվանում է Զատիկ: Այն շարժական տոն է եւ նշվում է մարտի 21-ից ապրիլի 25-ը ընկած ժամանակահատվածում: Վաղ շաբաթվա երեկոյան կատարվում է Զատկի ճրագալույցի արարողությունը:

Երեկոյան անհրաժեշտ է պատրաստել ուտեստները: Ըստ ավանդույթի, սեղանին անպայման պետք է լինեն ներկած հավկիթներ, ձկնեղեն, չամիչով փլավ եւ գինի, ձվով տապակած բանջարեղեն, թանձր եփած թանապուր:

Հավկիթները ներկում են կարմիր, քանի որ հավկիթը խորհրդանշում է երկիրը, իսկ կարմիր գույնը Քրիստոսի արյունը: Նրա արյունն է խորհրդանշում նաեւ խաղողից պատրաստված գինին:

Սուրբ Զատկին Հայաստանյայց բոլոր եկեղեցիներում մատուցվում է պատարագ, անցյալում նաեւ տնօրհնեք է կատարվել: Հաջորդ օրը երկուշաբթի, Զատկի մեռելոցն է: Հանգուցյալների ընտանիքներին այցելելիս բարեկամներն իրենց հետ վերցնում են օղի կամ գինի:

Մեծ պասի ինքնամաքրումով մարդիկ նոր կյանք էին սկսում, եւ այդ խորհուրդը սկսվում էր հավերժության խորհրդանիշի ձվի ճաշակումով: Տոնի ընթացքում ամենասիրված խաղը ձվակռիվներն են, ընդունված է միմյանց կարմիր ձու նվիրելը:

Ասում են Զատկի օրը բախտ են բաժանում: Զատկի գիշերը ծնված երեխան բախտավոր է եւ օժտված գուշակելու շնորհքով: Զատկի տոնին քրիստոնյաները իրար հանդիպելիս ողջունում են.
- Քրիստոս հարյավ ի մեռելոց:
- Օրհնյալ է Հարությունը Քրիստոսի,-կլինի պատասխանը:

Փլավ չրով եւ չամիչով

0,5 կգ բրինձ, 1 լ ջուր, 100 գ ծիրանի կամ սալորի չիր, 100 գ չամիչ, 3 ճաշի գդալ նուշ (մանրած) կամ ընկույզ, 100 գ մեղր, 250 գ կարագ:

Ջուրը, 100 գ կարագը, աղը լցնել կաթսան, դնել կրակին: Երբ եռա, ավելացնել բրինձը: Առանձին կաթսայում 150 գ կարագը տաքացնել, ավելացնել նուշը, չիրը, չամիչը եւ տապակել: Երբ մրգերը փափկեն, ավելացնել մեղր եւ այնքան եռացրած ջուր, որ ծածկի: Եռացնել 10 րոպե: Պատրաստի բրինձը բլրածեւ լցնել ափսեն, վրան էլ տաք խառնուրդը:

ԱՇԽԱՐՀ

Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբ

Մարտի 30-ին, ապրիլի 5-ին «Համաշխարհային հոգեւոր երաժշտության գանձարանից»
Մենակատարներ ***Իրինա Զաքյան, Հեղինե Ասատրյան, Սուրեն Զուրաբյան***
Դիրիժոր ***Զավեն Վարդանյան***
Ծրագրում Հայդն «Աշխարհի արարումը»:
Մարտի 31-ին Կամերային երաժշտության երեկո
Կարեն Հարությունյան (ջութակ, Բելգիա)
Գլխ. դիր. եւ գեղ. ղեկ. ***Էդուարդ Թոփչյան***
Համերգների սկիզբը 19.00-ին:

Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոն

Մարտի 30-ին «Կտակ» *Գ. Սունդուկյան*
Ապրիլի 3-ին «Տրամվայ ցանկության» *Թենեսի Ուիլյամս*
Ապրիլի 4-ին «Ոտքի, դատարանն է գալիս» *Պերճ Զեյթունցյան*
Գեղ. ղեկ. ***Վահե Շահվերդյան***
Ներկայացումների սկիզբը ժամը18.00-ին:

Հ. Պարոնյանի անվան կոմեդիայի պետական թատրոն

Մարտի 29-ին «Իմ զոքանչը» Վ. Կոտոյան
Մարտի 30-ին, ապրիլի 5-ին «Խանումի արարքները» Դանչելի Ցագարելի
Մարտի 31-ին «Գնա մեռի, արի սիրեմ» *Արամաշոտ Պապյան*
Գեղ. ղեկ. ***Երվանդ Ղազանչյան***
Ներկայացումների սկիզբը 19.00-ին:

Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն

Մարտի 29-ին «Ռոմեո եւ Զուլետ» *Վ. Շեքսպիր*
Մարտի 30-ին «Հիսուս Նազովրեցին եւ նրա երկրորդ աշակերտը» *Պ. Զեյթունցյան*
Մարտի 31-ին «Իմ սիրտը լեռներում է» *Վ. Սարոյան*
Ապրիլի 5-ին «Սպանել սիրո համար» *Ա. Նիկոլայի*
Գեղ. ղեկ. ***Արմեն Խանդիկյան***
Ներկայացումների սկիզբը 18.00-ին:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ
ТЕАТР АМАЗГАИН
HAMAZGAYIN THEATRE

Համազգային թատրոն

Մարտի 29-ին,30-ին
«Շաբաթն ուրբաթից շուտ եկավ» *Ժ. Անանյան*
Քնարական կատակերգություն
Գեղ. ղեկ. ***Սոս Սարգսյան***
Ներկայացումների սկիզբը 19.00-ին:

Երեւանի կամերային թատրոն

Մարտի 29-ին, ապրիլի 5-ին «Կաբարե»
Մարտի 30-ին «Միսս» Հայաստան անաստվածային կատակերգություն»
Գեղ. ղեկ. ***Արա Երնջակյան***
Ներկայացումների սկիզբը 19.00-ին:

Կինոթատրոն Մոսկվա

«Գարի Փոթթերը եւ փիլիսոփայական քարը» *ԱՄՆ*
«Վերջին համբույրը» *Իտալիա:*

ԱՍՏՂԱԳԻՐ

Խոյ - Հաջողություն կունենաք սիրո մեջ եւ ստեղծագործական կյանքում: Եթե շաբաթվա սկզբին ձեզ համակի սիրային խանդավառությունը, մի դիմադրեք: Քանի դեռ ուշ չէ, խիստ հսկողության տակ առեք ձեր բյուջեն, քանզի հետագայում եկամուտներ ստանալու հնարավորություններն ավելի քիչ են:

Ցուլ - Հիմնական իրադարձությունները կապված կլինեն տան եւ ընտանիքի հետ: Շաբաթվա առաջին օրերին կարող եք լուծել տնային հարցերը: Այդ իսկ պատճառով շաբաթվա վերջը ճիշտ ժամանակն է վերականգնելու ուժերը, ի դեպ, գերադասելի է միայնության մեջ չլարվելով թե հոգեբանորեն, թե ֆիզիկապես:

Երկվորյակներ - Այս շաբաթ կարող եք արմատապես փոխել (հուսով ենք դեպի լավը) փոխհարաբերությունները մտերիմների հետ: Աչքի կընկնեք գործնականությամբ եւ պատասխանատվությամբ, ինչը կբարձրացնի հուսալի մարդու ձեր վարկը: Շաբաթվա վերջին առաջին պլան կմղվեն հարաբերությունները ընկերների հետ, իսկ շփումը գործընկերների հետ ձեռք կբերի ինտելեկտուալ երանգավորում:

Խեցգետին - Այս շաբաթ մոլորակները կնպաստեն համարձակ ձեռնարկներին: Բոլոր գործերում ձեր օգնականը կլինի ոգեւորությունը: Շաբաթվա վերջին գագաթնակետին կհասնեն ռոմանտիկ ապրումները: Վատ ժամանակ չէ նաեւ հետագա անելիքների մասին մտորելու համար:

Առյուծ - Ձեզ սպասվում է հաջողակ եւ երջանիկ շաբաթ: Շատ Առյուծներ կարող են մասնակցել հեղինակավոր միջոցառումների: Աշխատավայրում կվայելեք աշխատակիցների սերն ու հարգանքը: Շաբաթվա վերջում կնկատվեն նոր միտումներ անձնական կյանքում. ավելի շատ ազատություն, քիչ կախվածություն: Միայն թե դա չպետք է ընկալել որպես ձեր երկրորդ կեսից լիովին անջատվելու ազդանշան. ամեն ինչ պետք է չափավոր լինի:

Կույս - Այս շաբաթ պետք է ճիշտ կողմնորոշվել մեծ տեղեկատվական դաշտում, լինել ամենուր, շատ բան վերանայել: Շաբաթվա կեսին հնարավոր է անսպասելի իրադարձություն, որը ձեզ հնարավորություն կտա գաղտնի լիդերի դիրք գրավել եւ բարձրացնել հեղինակությունը:

Կշեռք - Այս շաբաթ գլխավորը կլինեն գործընկերային հարաբերությունները բոլոր ոլորտներում աշխատանքում, բիզնեսում, անձնական կյանքում: Օգտակար կապեր հաստատելու բազմաթիվ առիթներ կլինեն, միայն թե հնարավորությունը բաց մի թողեք:

Կարիճ - Շաբաթվա առաջին կեսը կանցնի հանգիստ ըստ նախատեսվածի: Ապրիլի 3-ից հետո կարելի է ձեռնամուխ լինել փառասիրական պլանների իրականացմանը, ընդլայնել լիազորությունները աշխատավայրում եւ բարձրացնել հեղինակությունը ընտանիքում: Ի դեպ, սա ձեր նվազագույն ծրագիրն է առաջիկա երեք շաբաթվա համար:

Աղեղնավոր - Շաբաթը կարող է դրական լուրջ փոփոխությունների սկիզբ հանդիսանալ: Չնայած մեծ ծանրաբեռնվածությանը ժամանակ գտեք բոլոր տարբերակները ծանրութեթեւ անելու համար եւ ընտրեք այն, որտեղ կա ստեղծագործելու հնարավորություն:

Այծեղջյուր - Շաբաթվա սկզբին ի հայտ կգան իշխանությամբ եւ հեղինակությամբ օժտված նոր ծանոթներ: Այդ կապերը հետագայում բազմիցս կարող են պետք գալ: Ականջներդ ծայնի պահեք. հնարավոր են իրադարձություններ, որոնք թույլ կտան հասկանալ ապագայի միտումները:

Ջրհոս - Այս շաբաթ կյանքի ռիթմը մի քիչ կդանդաղի, բայց անգամ ոչ մեծ ջանքերը մեծ արդյունքներ կտան: Օգտվեք դրանցից ընտանեկան եւ աշխատանքային խնդիրները լուծելիս: Հանգստյան օրերն անցկացրեք ընկերների ու մտերիմների հետ: Դուք հիանալի կհանգստանաք, իսկ նրանք մեկ անգամ եւս կգնահատեն ձեր սրամտությունը եւ լավատեսությունը:

Ձուկ - Ժամանակն է ամփոփելու արդյունքները նոր ծանոթությունների եւ կապերի, որ ունեցաք ողջ ամսվա ընթացքում: Ընտրեք ձեր կարծիքով առավել հեռանկարայինները եւ փորձեք շարունակել դրանք: Աշխատեք պարտք չվերցնել, քանի որ դժվարություններ կունենաք վերադարձնելիս:









It pays to go to the right source



VRESSO

A. Sabounjian MFG. Company S.A.L.

Equipment for hotels, restaurants, hospitals, cafeterias, clubs, supermarkets...

Autostrade Jal El Dib, Sabounjian Bldg, Lebanon
Tel : 04-712300, GSM : 03-655300, Fax : 04-712301, P.O. Box : 60003, E.Mail : vressobey@attmail.com, Website : www.vresso.com